ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ըստ լրատվական նյութերի եւ
պաշտոնական տեղեկությունների

ՎԱՆԱՁՈՐ 2024

HELSINKI CITIZENS ASSEMBLY

Democracy Development Foundation

www.hcav.am

Տեղեկանքը կազմեցին՝ Նազելի Մովսեսյան
Անուշ Պետրոսյան
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցի/տեսահոլովակի/ֆիլմի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ: Զեկույցում/տեսահոլովակում/ֆիլմում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ներածություն

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) արդեն չորրորդ տարին է՝ իր ուշադրության կենտրոնում է պահում ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրով[1] (այսուհետ նաև՝ Ծրագիր) նախատեսված զինված ուժերի բարեփոխումներին, վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված գործողությունների կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքները։

Կազմակերպությունը 2021 թվականից ի վեր հրապարակել է 3 տեղեկանք[2] ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների արդյունքների վերաբերյալ։

Թե՛ նախորդ, թե ներկայացվող տեղեկանքում Կազմակերպության կողմից ուսումնասիրություններն իրականացվել են ՀՀ զինված ուժերում բարեփոխումների վերաբերյալ պաշտոնական աղբյուրներով և զանգվածային լրատվամիջոցներով տարածված և հանրությանը հասանելի դարձած տեղեկությունների վերլուծությունների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված տեղեկատվության հարցումների հիման վրա։

ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ ենթակետի առաջնահերթությունները հետևյալն են.

1. ***Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի:***

2. ***Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում:***

3. ***Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով:***

---

1 https://www.gov.am/files/docs/4586.pdf,

2 https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/

https://hcav.am/military-reforms-21/

https://hcav.am/armyrep05-07-2023/

4. *Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում:*

5. *Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում:*

6. *Ռազմական կրթության և գիտության զարգացում:*

7. *Տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության ոլորտի բարեփոխումներ:*

8. *Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում:*

9. *Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացում, զինծառայության գրավչության բարձրացման և զինծառայողի հեղինակության մեխանիզմների կատարելագործում, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ ծրագրերի իրականացում, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական նոր ծրագրեր:*

10. *Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերի կարգապահության խթանման, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում:*

11. *Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում:*

Ներկայացվող 4-րդ տեղեկանքում դիտարկվում են 2023 թվականի հուլիսից 2024 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում իրականացված գործողությունները:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹԹ ԾՐԱԳՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԸՍՏ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջնահերթություն 1

Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի

ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսված է, որ պետք է ստեղծվեն աստիճանական և կանոնակարգված ձևով պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատման օրենսդրական հիմքեր:

Այս առաջնահերթության իրականացմանն են ուղղված ըստ էության Ազգային Ժողովի կողմից օրենսդրական փոփոխություններով և կառավարության որոշումներով սահմանված հետևյալ գործողությունները.

- Զինված ուժերում ատեստավորման իրականացում
- «Պաշտպան հայրենյաց» ծրագրի ներդրում

Դեռևս 2022 թվականի նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ներկայացրեց «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերը[3]:

Նախագծերով նախատեսվում էր պայմանագրային զինծառայողների ատեստավորման միջոցով վերջիններիս համար սահմանել լրավճար: Օրենսդրական փոփոխության նպատակն էր բարձրացնել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու գրավչությունն ու շահագրգռվածությունը: Այդ նպատակով նախատեսվում էր

[3] https://www.e-draft.am/projects/4644/about

անմիջականորեն մարտական և դրան հավասարեցված խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների համար սահմանել լրավճար՝ զինծառայողների ատեստավորման միջոցով, և դրանով իսկ ստեղծել նախադրյալներ արհեստավարժ պայմանագրային զինվորական ծառայության զարգացման համար:

Ատեստավորմանը զինծառայողներն առաջին անգամ մասնակցում են կամավոր: Ատեստավորված և հավելավճար ստացող զինծառայողները կարող են ատեստավորվել 3 տարին մեկ անգամ: Իսկ հավելավճարի չափը, ըստ ՀՀ պաշտպանության նախարարի, սահմանվելու է կառավարության որոշմամբ:

2022 թ. դեկտեմբերի 7-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը հաստատվեց և ուժի մեջ մտավ նույն թվականի դեկտեմբերի 23-ին[4]:

Արդեն 2023 թ. փետրվարի 9-ի կառավարության նիստի ժամանակ ՀՀ կառավարությունը հաստատեց «Բանակում մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների որակավորման կարգը», որի արդյունքներով հաշվարկվելու են նաև զինծառայողներին տրվող հավելավճարների չափերը:

Ատեստավորումը ներառում է զինծառայողների մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստային գնահատում, ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճանի գործնական գնահատումը: Ատեստավորման մաս կազմող թեստային առաջադրանքը բաղկացած է 50 հարցից: Մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստային առաջադրանքների առնվազն 21 հարցին ոչ ճիշտ պատասխանելու դեպքում զինծառայողը ստանում է «անբավարար», 30-ից մինչև 34-ը ներառյալ հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «բավարար», 35-ից մինչև 44-ը

4 https://www.arlis.am/documentview.aspx?docid=172096

ներառյալ հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «լավ», իսկ 45 և ավելի հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «գերազանց» գնահատական։

Ատեստավորում չանցած զինծառայողները տարվա ընթացքում կարող են թեստավորում անցնել ոչ ավել, քան երկու անգամ մեկ տարվա ընթացքում։ Իսկ ատեստավորման անբավարար գնահատական ստանալու դեպքում զինծառայողների գործող պայմանագրի ժամկետի ավարտից հետո նոր պայմանագիր չի կնքվի։

Սույն դրույթը որոշ ռիսկեր է պարունակում նաև այն իմաստով, որ հստակ չէ՝ արդյոք կան երաշխիքներ, որ ատեստավորման գործընթացը անկողմնակալ և արդար է կազմակերպվում, ինչպես պիտի ապահովվի դրա թափանցիկությունը, արդյոք նման խնդիրները բացասաբար չեն ազդի ծառայության հանդեպ զինծառայողների վստահության վրա։

Մյուս կողմից էական նշանակություն ունի, թե ինչ բնույթի որակական և քանակական չափանիշներ են սահմանված ատեստավորման իրականացման հիմքում ըստ զինվորական մասնագիտությունների, և ինչքանով են նրանք արտացոլում զինվորական ծառայության պարտականությունների արդյունավետ կատարման պահանջները։ Եվ ընդհանրապես ինչպիսի զինված ուժերի պահանջների հիման վրա են ատեստավորման չափանիշները սահմանված, տարիներ շարունակ գոյություն ունեցած, թե բարեփոխումների արդյունքում նախատեսվող նոր, ժողովրդավարական պետության պահանջներին համապատասխանող զինված ուժերի։

2023 թ. հունիսի 5-ին մեկնարկեց զինծառայողների ատեստավորման գործընթացը։ Զինծառայողներն հանձնեցին շարային և ֆիզիկական պատրաստության նորմատիվները։ Հաջորդ օրը՝ 2023 թ. հունիսի 6-ին կայացավ զինծառայողների մասնագիտական գիտելիքների ստուգման փուլը։ Ատեստավորման գործընթացը գնահատող հանձնաժողովում ընդգրկված էին Շիրակի և Արագածոտնի նախկին մարզպետները, ովքեր այժմ զբաղեցնում են վարչապետի օգնականի պաշտոնը, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ։

2024 թվականի փետրվարի 28-ին Ազգային ժողովի պաշտպանության հանձնաժողովի նիստին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը հայտարարեց, որ ատեստավորման գործընթացին մասնակցել է 5783 զինվորական,

նրանց կեսից ավելին ստացել է անբավարար գնահատական։ Ըստ փոխնախարար Կ.Բրուտյանի հանրայնացրած թվերի՝ ատեստավորմանը մասնակցելու համար դիմել է 5908 զինծառայող, որոնցից 5783-ին հնարավորություն է տրվել մասնակցել, սակայն շեմը չի հաղթահարել 2957-ը։ Ատեստավորմանը մասնակցած զինվորականների 1.57 %-ը գերազանց է ստացել, 37.21 %-ը՝ բավարար, 10.08 %-ը՝ լավ, իսկ 51.13 %-ը՝ անբավարար[5]։

Նշված թվերն իրապես խիստ մտահոգիչ են զինված ուժերում զինվորական պարտականությունների չափանիշներին համարժեք առկա անձնակազմի կարողությունների տեսակետից, որին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել տարիներ շարունակ։ Ատեստավորման տվյալները առավել քան հիմնավորում են զինված ուժերում հրատապ, որակական և արդյունավետ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ պետության անվտանգային մարտահրավերներն ու սպառնալիքները դիմակայելու, կանխելու հրատապությունից ելնելով, և ի վերջո հանրային վստահությունը ձևավորելու հրամայականից։

Կազմակերպության 2024 թ. մայիսի 30-ի հարցմանը, թե ինչ է իրականացվել զինծառայության ժամկետների փոփոխություն և պայմանագրային ծառայության աճի, պրոֆեսիոնալ բանակի անցման ուղղությամբ, ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ **պարտադիր զինվորական ծառայության ժամկետի փոփոխությունը մեծապես կապված է «Պաշտպան հայրենյաց» ծրագրի արդյունավետ ընդլայնման հետ, որի արդյունքներով կքննարկվի նաև պարտադիր զինծառայության ժամկետի փոփոխության հարցը։**

2023 թվականի փետրվարի 9-ի Կառավարության որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը ներդրեց «Պաշտպան Հայրենյաց» ծրագիրը, որն իրենից ենթադրում է շարքային և սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից անցում պայմանագրային զինվորական ծառայության։ Ծրագրի ժամկետը 5 տարի է։ Կնքած պայմանագրի ժամկետի ավարտից հետո, անկախ զինծառայությունից արձակվելու կամ

[5] https://www.civilnet.am/news/766373/%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A1%D5%BF%D5%A5%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%AE%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A5%D5%BD%D5%AB%D6%81-%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%A2%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D6%80-%D5%A7-%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC/

ծառայությունը շարունակելու ցանկությունից, կամ առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու դեպքում այդ զինծառայողներին տրամադրվում է պատվովճար՝ 5 միլիոն դրամ, որը զինծառայողը կամ քաղաքացին կարող է տնօրինել իր հայեցողությամբ՝ առանց որևէ պարտադիր պայմանի։

Ի սկզբանե նախատեսվում էր, որ «Պաշտպան հայրենյաց» ծրագրով 5 տարվա ընթացքում պայմանագրային զինծառայողների ամսական վարձատրության չափը՝ 400 հազար դրամ, հաշվարկվելու է հիմք ընդունելով 24 միլիոն դրամով պարտադիր ժամկետային զինծառայությունից վաղաժամկետ ազատվելու հնարավորության ստեղծումը։

Հիշեցնենք, 2022 թվականի օգոստոսի 24-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ[6], որով ՀՀ պաշտպանության նախարարությունը առաջարկում էր շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ուսումնական փուլը լրանալուց հետո (միջինը՝ չորսուկես ամիս), զինծառայողի կողմից ՀՀ պետական բյուջե 24 միլիոն դրամ վճարելու պայմանով՝ վաղաժամկետ արձակել պարտադիր զինվորական ծառայությունից։ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը պաշտպանական գերատեսչությունը հանրային քննարկման դրեց իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում։ Նախագիծը, սակայն, չընդունվեց։

Փոխարենը, խոշոր չափի գումար վճարելու դիմաց զինվորական ծառայության կազմակերպման կամ զինվորական ծառայությունից ազատման վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից մեկ այլ օրենք ընդունվեց 2024 թվականի հունվարի 16-ին՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-23-Ս) օրենքը։

6https://www.e-draft.am/projects/4679

7 https://www.arlis.am/documentview.aspx?docid=189404

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց 1.1-ին և 1.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. *«1.1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա են նաև 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչև 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Սույն մասում նշված քաղաքացին սույն օրենքի 21-րդ հոդվածի (Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը) 1-ին, 2-րդ և 5-րդ մասերով, 23-րդ հոդվածի (Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տալը) 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 24-րդ հոդվածի (Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալը) 1-ին մասով սահմանված պայմանները չբավարարելու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ և ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից»:*

Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը լրացած և սույն օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները կարող են մինչև 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները մինչև 45 տարին լրանալն իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ **24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝** Հայաստանի

Հանրապետության **պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,** կամ **վեց ամիս** ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով **հինգ միլիոն** Հայաստանի Հանրապետության դրամ, կամ **մեկ ամիս** ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով **ութ միլիոն** Հայաստանի Հանրապետության դրամ, եթե չունեն սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ **պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել**՝ Հայաստանի Հանրապետության պետական **բյուջե վճարելով տասնհինգ միլիոն** Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով՝ օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո»:

Մենք գտնում ենք, որ նման օրենսդրական կարգավորումները միտված են միայն պետական բյուջե լրացուցիչ ֆինանսական միջոցներ ուղղելուն:

Նախագծի հեղինակ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանը Ազգային ժողովում ելույթի ժամանակ նշեց[8], որ 2022 թվականի տվյալներով շուրջ 10000 քաղաքացի զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով հետախուզման մեջ է գտնվում, որոնցից միայն 420-ն է հայտնաբերվել կամ կամովին ներկայացել: Հիմնվելով նույն թվային տվյալի վրա՝ եթե օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած 9580 քաղաքացի օգտվի օրենքի ընձեռած հնարավորությունից և պետական բյուջե վճարի օրենքով սահմանված առավելագույն 15 մլն ՀՀ դրամը, ապա այն բավական կլինի 1 տարով մոտ 30000 պայմանագրային զինծառայող ներգրավելու համար (պայմանագրային զինծառայողների աշխատավարձը հաշվարկվել է 400 000 ՀՀ դրամ, որն ըստ Հայկ Սարգսյանի ատեստավորված պայմանագրային զինծառայողին տրվող աշխատավարձի չափն է[9]): Նշենք նաև, որ ներկայացված թիվը պայմանական է, քանի որ հայտնի չէ, թե օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած որքան քաղաքացի պատրաստ կլինի վճարել սահմանված գումարի առավելագույն չափը: Բացի այդ, ներգրավվող պայմանագրային զինծառայողների թիվը կարող է փոփոխվել պայմանավորված այն հանգամանքով, որ երկրի անվտանգային իրավիճակով պայմանավորված պայմանագրային զինվորական ծառայության նկատմամբ հետաքրքրվածությունը գնալով նվազում է, չնայած այն հանգամանքին, որ պաշտպանության նախարարությունը տարիներ շարունակ փորձում է զինվորական ծառայության նկատմամբ գրավչությունը մեծացնել պայմանագրային զինծառայողների աշխատավարձերի բարձրացման և սոցիալական երաշխիքների բարելավման միջոցով:

Այսպիսով, ամփոփելով առաջնահերթության կատարման աստիճանը, կարող ենք նշել, որ ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրի զինված ուժերի բարեփոխումների սույն առաջնահերթությամբ նախատեսված պրոֆեսիոնալ բանակի անցման գործընթացի ուղղությամբ վերջին տարում իրականացրած քայլերը դեռևս էական փոփոխության չեն

8 https://www.youtube.com/watch?v=bj1lfPUuI1g

9 https://www.aravot.am/2023/11/14/1382337/

հանգեցրել, և զինված ուժերում անձնակազմի համալրման խնդիրը շարունակում է լուծվել պարտադիր զինծառայության միջոցով:

Ինչ վերաբերում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետի փոփոխությանը, ապա Կառավարության 2021 – 2026 թթ. ծրագրի գործողության երրորդ տարում այդ ուղղությամբ էական փոփոխության հասնելը պայմանավորված կլինի, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, «Պաշտպան հայրենյաց» ծրագրի արդյունավետ ընդլայնմամբ:

Առաջնահերթություն 2

Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում

Կառավարության 2021-2026 թթ. հնգամյա ծրագրում որպես զինված ուժերի բարեփոխման կարևոր բաղկացուցիչ մաս նշվում է հետևյալը. «Կառավարությունը բարձրացնելու է Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետությունը: Իրականացվելու են անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանը, այդ թվում՝ պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունների ու պարտականությունների»:

Կազմակերպության 2024 թ. մայիսի 30-ի տեղեկատվության հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ 2022-2023 թվականներին «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարվել են ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի լիազորությունների հստակեցման փոփոխություններ, դրանց հիման վրա հաստատվել են ՊՆ և ԶՈՒ նոր

կանոնադրություններն ու կառուցվածքները, որոնք ուղղված են զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի բարեփոխմանը:

2023 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ Կառավարության N 1825-Լ որոշմամբ [10] հաստատվեց և դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրությունը:

Կանոնադրությամբ սահմանվում են ՀՀ պաշտպանության նախարարության նպատակները և խնդիրները, գործառույթները, նախարարության կառավարումն ու ղեկավարումը:

Մասնավորապես սահմանվեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքում՝

1) **զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունն** անվանափոխվում է **հանրապետական զինվորական կոմիսարիատի**.

2) **կոլեգիայի աշխատանքների կազմակերպման և վերլուծության** բաժինն անվանափոխվում է **կազմակերպավերլուծական** բաժնի.

3) **կապիտալ շինարարության վարչությունն** անվանափոխվում է **կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության**.

4) **նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը բաժանվում է՝** ստեղծելով **թիկունքային ապահովման վարչությունը, սպառազինության և տեխնիկական ապահովման վարչությունը և զինվորական ներկայացուցչությունների բաժինը**.

5) կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունից առանձնացման եղանակով **ստեղծվում են երկու նոր կառուցվածքային ստորաբաժանումներ՝ ռազմագիտակրթական քաղաքականության վարչությունը և քաղաքացիական անձնակազմի կառավարման վարչությունը**: Այդ կապակցությամբ **կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունն** անվանափոխվում է **կադրային քաղաքականության գլխավոր վարչության**.

6) ռազմական վերահսկողական ծառայությունից առանձնացման եղանակով **ստեղծվում է** նոր կառուցվածքային ստորաբաժանում՝ **ներքին քննությունների վարչությունը**.

---

10 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184341

Կանոնադրության համաձայն ստեղծվեցին նաև հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝

ա. ռազմաբժշկական ապահովման վարչությունը,

բ. կենտրոնացված փոխադրումների ապահովման (լոգիստիկ) վարչությունը,

գ. պահեստային տնտեսության կառավարման ծառայությունը,

դ. ստանդարտացման և չափագիտության ծառայությունը:

Կանոնադրությամբ նաև սահմանվեց, որ նախարարության՝

1) **հանրապետական զինվորական կոմիսարիատը, ռազմական ոստիկանությունը և գործերի կառավարչությունը** գործում են **գլխավոր վարչության կարգավիճակով**.

2) **ռազմական վերահսկողական ծառայությունը, կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը, պահեստային տնտեսության կառավարման ծառայությունը և քարտուղարությունը** գործում են **վարչության կարգավիճակով**.

3) **ստանդարտացման և չափագիտության ծառայությունը, մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնը, կենտրոնական արխիվը** գործում են **բաժնի կարգավիճակով**:

Պաշտպանության նախարարությունը Կազմակերպությանը նաև հայտնել է, որ ԶՈՒ կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով պլանավորվել և անցկացվել են ռազմավարական, հրամանատարաշտաբային զորավարժություններ և շտաբային մարզումներ:

ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին հրապարակված զեկույցում [11] նշվում է, որ 2023 թվականի ընթացքում ամբողջացվել են զինված ուժերի կառավարման և ղեկավարման միասնական ավտոմատացված համակարգի ստեղծման աշխատանքները:

Կառավարության Ծրագրում նշվում է նաև, որ ներդրվելու է միասնական ավտոմատացված կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովելու է ժամանակակից ռազմական գիտությանը համահունչ արագ և առաջանցիկ որոշումների կայացումը: Պաշպանության նախարարությունը Կազմակերպության պատասխան

11 https://www.gov.am/files/docs/5659.pdf

գրությամբ նշել է, որ 2023 թվականի ընթացքում միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ քաղաքացիական կազմակերպությունների հետ կատարվել են և այժմ էլ շարունակվում են իրականացվել նպատակաուղղված աշխատանքներ, մինչդեռ չի մասնավորեցրել, թե երբ կավարտվեն այդ աշխատանքները:

Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված է մշակել նոր **Ռազմական դոկտրին, Պետության պաշտպանության պլան, կատարելագործել պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերն ու ընթացակարգերը, վերանայել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը:**

Ռազմական դոկտրինը, ըստ ՀՀ պաշտապանության նախարարության, մշակվելու է ազգային անվտանգության ռազմավարության մշակումից և հաստատումից հետո: Մյուս փաստաթղթերի մշակման մասին տեղեկություններ հայտնի չէն:

Այսպիսով, վերջին մեկ տարվա ընթացքում սույն առաջնահերթության իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերից է ՀՀ պաշտպանության նախարարության նոր Կանոնադրության ընդունումը:

Թե նախորդ ժամանակահատվածում, թե այժմ ՀՀ պաշտպանության նախարարությունը հստակ չի նշում, թե երբ են ավարտվելու իրապես շատ կարևոր միասնական ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքները:

Միաժամանակ, Կառավարության հնգամյա ծրագրի մեկնարկից մինչ այժմ չի մշակվել ռազմական դոկտրինը և չկան դրա համար նախատեսված հստակ ժամկետներ, քանի որ ռազմական դոկտրինի մշակումը կախված է ազգային անվտանգության ռազմավարության մշակումից և հաստատումից հետո, որի ժամկետները ևս հայտնի չեն:

Առաջնահերթություն 3

Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով

Սույն առաջնահերթության ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ Կազմակերպության հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության

նախարարությունից հայտնել են, որ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման նպատակով շարունակվում են ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքի փոփոխությունների իրականացման, գործառույթների հստակեցման և բաշխման, զորամիավորումների, միավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կազմ-կառուցվածքի վերանայման աշխատանքներ:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2022 թվականի հուլիսի 7-ի փոփոխությամբ՝ ***Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կառավարչական իրավահարաբերությունները կարգավորվում են օրենքով: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալն ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալների պաշտոնները կարող են հանդիսանալ նաև զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական խմբի պաշտոններ, որոնց թիվը սահմանում է ՀՀ վարչապետը[12]:***

Ըստ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ ԶՈՒ գլխավոր շտաբի պետն այսուհետ ի պաշտոնե Պաշտպանության նախարարի առաջին տեղակալն է, որը, սակայն, չի հանդիսանում նախարարին փոխարինող պաշտոնատար անձ:

Հիշեցնենք, որ ՀՀ Գլխավոր շտաբի պետի պաշտոնը 2022 թվականի փետրվարից մինչև հուլիս թափուր էր, քանի որ նախկին գլխավոր շտաբի պետը՝ Արտակ Դավթյանը, պաշտոնանկ էր արվել բանակին անորակ հրթիռներ մատակարարելու քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելուց հետո: Գործող իշխանությունը հայտարարել էր, որ ԳՇ պետ կնշանակվի օրենքի փոփոխությունից հետո: Փաստացի, հետպատերազմյան Հայաստանում Սահմանադրությամբ ամենաբարձր զինվորական պաշտոնյայի հաստիքը շուրջ 5 ամիս թափուր էր:

2022 թվականի հուլիսի 14-ին վարչապետի առաջարկությամբ և ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանը: Վերջինս 2021 թվականի մայիսին նշանակվել էր ԳՇ պետի տեղակալ, ապա սեպտեմբերին ազատվել այդ պաշտոնից:

12 https://www.arlis.am/documentview.aspx?docid=166849

ԶՈՒ գլխավոր շտաբում նոր նշանակումներ եղան 2024 թվականի փետրվարին։

Նախագահի պաշտոնական կայքէջում հրապարակված հրամանագրերի համաձայն՝ Կարեն Գրիգորյանը նշանակվեց է ԶՈՒ ԳՇ պետի տեղակալ, Թեմուր Շահնազարյանը՝ Զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետ-զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, Վիգեն Մկրտչյանը՝ ԶՈՒ գլխավոր շտաբի կապի զորքերի պետ-կապի և ավտոմատացված կառավարման համակարգերի վարչության պետ, Դավիթ Ալեքսանյանը՝ ԶՈՒ ԳՇ մարտական պատրաստության վարչության պետ, Արմեն Սեյրանյանը՝ Զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմավարական պլանավորման վարչության պետ, Համլետ Լևոնյանը՝ Խաղաղապահ ուժերի բրիգադի հրամանատար։

Պաշտպանության նախարարությունում ՀՀ նախագահի հրամանագրերով տեղի են ունեցել կադրային վերանշանակումներ, որոնք պայմանավորված են զինված ուժերի բարեփոխումների շրջանակում 2023 թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով՝ ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ նոր կանոնադրությունների և կառուցվածքի հաստատման հանգամանքով։

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրերով պաշտպանության նախարարությունում մասնավորապես կատարվել են հետևյալ կադրային նշանակումները.

Սամվել Մինասյանը նշանակվել է տարածքային պաշտպանության զորքերի հրամանատար՝ ազատվելով տարածքային պաշտպանության և պահեստային ուժերի հրամանատարի պաշտոնից,

Հրաչ Ստեփանյանը նշանակվել է ՊՆ կադրային քաղաքականության գլխավոր վարչության պետ՝ ազատվելով ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետի պաշտոնից,

Սմբատ Գրիգորյանը նշանակվել է զինված ուժերի գլխավոր շտաբի կազմակերպչական զորահավաքային գլխավոր վարչության պետ՝ ազատվելով ՀՀ ԶՈՒ ԳՇ անձնակազմի կառավարման գլխավոր վարչության պետի պաշտոնից,

Մհեր Շիրինյանը նշանակվել է ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության պետ՝ ազատվելով ԶՈՒ սպառազինության պետ-վարչության պետի պաշտոնից,

Վահրամ Գրիգորյանը նշանակվել է զինված ուժերի գլխավոր շտաբի ինժեներական զորքերի պետ-վարչության պետ,

Արամ Պողոսյանը նշանակվել է ՊՆ թիկունքային ապահովման վարչության պետ՝ ազատվելով ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետի պաշտոնից,

Գեղամ Փաշիկյանը նշանակվել ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության պետ՝ ազատվելով ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետի պաշտոնից։

Փաստացի 2023 հուլիս – 2024 հուլիս ժամանակահատվածում ՀՀ ՊՆ-ում կատարվել է 13 հաստիքային-կադրային փոփոխություն։

Ստորև ներկայացվող աղյուսակում արտացոլված են Կազմակերպության կողմից նախկինում հրապարակված տեղեկանքներում արձանագրված՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունում կատարված հաստիքային-կադրային փոփոխությունները։

Աղյուսակ 1. 2020-2024 թթ. ՀՀ ՊՆ-ում կատարված կադրային-հաստիքային փոփոխությունները

2020 նոյեմբեր-2021 նոյեմբեր	9 փոփոխություն
2021 դեկտեմբեր -2022 հունիս	13 փոփոխություն
2022 հուլիս-2023 հուլիս	13 փոփոխություն
2023 օգոստոս-2024 հուլիս	13 փոփոխություն

Ակնհայտ է, որ ՀՀ Պաշտպանության նախարարությունում շարունակվող կադրային փոփոխությունները նվազման միտում չունեն, ինչի մասին են վկայում 2021 թվականից մինչ օրս իրականացված լայնածավալ կադրային-հաստիքային փոփոխությունները։

Ինչպես նախկին տեղեկանքներում, ներկայումս ևս արձանագրում ենք, որ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի փոփոխությունը արդարացված կարող են լինել միայն այն դեպքում, եթե դրանք ուղեկցվում են համակարգային և բովանդակային փոփոխություններով, երաշխավորում են զինվորական ծառայության անվտանգության և կարգապահության պահպանումը, ուղղված են զինված ուժերում մարդու իրավունքների գերակայության սկզբունքի կարևորմանը և զինված ուժերի մարտունակության բարձրացմանը։

Ինչ վերաբերում է Ծրագրով նախատեսված ՀՀ զինված ուժերի կառավարման և զորային օղակներում կազմակերպական և հաստիքային փոփոխությունների

իրականացմանը, առաջադրված խնդիրների լուծման նպատակով մեծ շարժունակությամբ և կրակային հզորությամբ, երկար ժամանակ ինքնուրույն մարտական գործողություններ վարելու ունակ զորամիավորումներ ու ստորաբաժանումներ կազմավորվելուն, ապա դրանց մասին ինչպես նախորդ տեղեկանքների հրապարակման պահին, այնպես էլ այժմ տեղեկություններ հայտնի չեն:

Առաջնահերթություն 4

Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում

Սույն առաջնահերթությամբ նախատեսվում է խթանել ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը՝ հիմնված հայաստանյան գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վրա:

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ «շարունակվելու են սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացները: Առավել նպատակային քաղաքականություն է իրականացվելու դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում: Հատուկ կարևորություն է տրվելու այդ ոլորտում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների զարգացմանը, մասնավորապես՝ ընդլայնվելու է Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը, որն առաջնահերթ ուղղվելու է համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2022 թվականի հուլիսի 7-ին կատարված փոփոխության համաձայն ՀՀ կառավարությունն իրականացնում է ՀՀ պաշտպանության քաղաքականությունը, այդ թվում՝ սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների կուտակման և շահագործման (ծախսի) նորմաների և շահագործման ժամկետների սահմանման կարգը, սպառազինությունը, ռազմական տեխնիկան ու ռազմական նշանակության այլ

նյութատեխնիկական միջոցները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու և դրանց օտարման կամ ոչնչացման կարգը։

ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների՝ սպառազինություններին վերաբերող առաջնահերթությանն ուղղված քայլերի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվության հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ «ՀՀ զինված ուժերի մարտունակության աստիճանը բարձրացնելու, զորամիավորումները, միավորումներն ու զորամասերն արդի սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրելու նպատակով, համաձայն «ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի 2023-2027 թթ. զարգացման պետական ծրագրի» ձեռք են բերվում և հատկացվում նոր ու ժամանակակից սպառազինություն, ռազմական տեխնիկա և ռազմատեխնիկական այլ նյութական միջոցներ»։

ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը 2024 թվականի մարտի 6-ին լրագողների հետ զրույցում նշեց [13] , որ Հայաստանը վարում է դիվերսիֆիկացման ռազմավարություն։ Ռազմական տեխնիկայի ձեռքբերումը, օրինակ, Ռուսաստանի Դաշնության հետ 96 տոկոսից իջել է 10 տոկոսից էլ ցածր, և սա ըստ Գրիգորյանի նշանակում է, որ Հայաստանն իրականացնում է դիվերսիֆիկացիա, և Հայաստանը գործընկերներ է ձեռք բերում ոչ միայն Արևմուտքում, այլև այլ տեղերում՝ Ասիայում, Հնդկաստանում։ Ըստ ԱԽ քարտուղարի՝ դիվերսիֆիկացման գործընթացը վերաբերում է և՛ տնտեսական, և՛ անվտանգային հարաբերություններին։

Հարկ է նշել նաև, որ հատկապես 2022 թվականի փետրվարին Ուկրաինայի դեմ ՌԴ-ի սանձազերծած ագրեսիայից հետո Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցությունը էլ ավելի նվազեց, ինչն էլ ակնհայտ դարձավ արդեն 2023 թվականին։ Այս ամենը պատճառ հանդիսացավ, որ Հայաստանի Հանրապետությունը ռազմատեխնիկական համագործակցության համար գտնի և դիտարկի նոր գործընկերների։

Հիշեցնենք, որ 2022 թվականի հուլիսից հայկական ու հնդկական մամուլում շրջանառվեցին տեղեկություններ այն մասին, որ Հայաստանը պատրաստվում է

13 https://www.1lurer.am/hy/2024/03/06/1/1089073

Հնդկաստանից ռազմական տեխնիկա ձեռք բերել: Համաձայն հնդկական Economic Times պարբերականի հրապարակման՝ Հնդկաստանի պաշտպանության նախարարությունը Հայաստանի հետ հրթիռների, արկերի և զինամամթերքի մատակարարման խոշոր պատվեր է ստորագրել: Ըստ նույն պարբերականի՝ երկու երկրների կառավարությունները զենքի և զինամթերքի մատակարարման պայմանագրերը կնքել են 2022 թվականի սեպտեմբերին[14]: Գործարքի գինը գնահատվում է մոտ 245 մլն դոլար: Հնդկաստանը Հայաստանին սպառազինություն էր վաճառել նաև 2020 թվականին: Այդ ժամանակ հայկական կողմը մոտ 40 մլն դոլարով ձեռք էր բերել չորս Swathi ռադարներ: 2022 թվականի հոկտեմբերի 18-ին Հնդկաստան աշխատանքային այցի շրջանակում ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպեց Հնդկաստանի պաշտպանության նախարար Շրի Ռաջնաթ Սինկհի հետ[15], որի ընթացքում քննարկվեցին համագործակցության ընդլայնման հնարավորությունները, երկկողմ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մի շարք հարցեր:

2023 թվականի հունվարին հնդկական մամուլը կրկին սկսեց լուրեր[16] շրջանառել Հայաստանի հետ համագործակցության, մասնավորապես այն մասին, որ Հայաստանը դիտարկում է հնդկական միջին հեռահարության «երկիր-օդ» դասի հրթիռներ (MR_SAM) գնելու հավանականությունը: Ըստ IDRW (Indian Defence Research Wing) պորտալի՝ Հայաստանը թեև արդեն շահագործում է S-300PS մարտկոցներ, որոնք ունեն 150 կմ խոցման հեռահարություն, սակայն չունի որակյալ միջին մակարդակի «Երկիր-օդ» զենիթահրթիռային համակարգ:

2023-ի սեպտեմբերին հնդկական Bharat Forge ընկերության նախագահ Բաբա Կալյանին հայտարարեց[17], որ Հայաստան է մատակարարվել 155 մմ տրամաչափի ATAGS հաուբիցներ: Նշվում էր, որ մատակարարված վեց քարշակվող հաուբիցները առաջին խմբաքանակն են: Հնդկական աղբյուրները պնդում են, որ Հայաստանը պատվիրել է ընդհանուր 90 ATAGS հաուբից: Պայմանագրով նախատեսվում է մնացած 84 ATAGS հաուբիցները մատակարարել փուլերով՝ երեք տարվա ընթացքում:

14 https://economictimes.indiatimes.com/news/defence/arming-armenia-india-to-export-missiles-rockets-and-ammunition/articleshow/94518414.cms?fbclid=IwAR1VIC6igt1fpMsIt49U_gBMruLr32FSUEEDGUb5SWaiE3WT9eJl_U0aCXo

15 https://www.mil.am/hy/news/11119

16 https://idrw.org/armenia-considering-indian-mr-sam-air-defence-system/#more-303757

17 https://idrw.org/armenia-gets-six-atags-guns-from-india-84-more-soon/

Ինչպես նախորդ տարի հրապարակված տեղեկանքում, այժմ ևս արձանագրում ենք, որ ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2024 թվականի փետրվարի 23-ին հրապարակված տեղեկանքում [18] հայ-հնդկական զենքի և զինամթերքի մատակարարմանը որևէ անդրադարձ չկա:

2024 թ. հուլիսին Հնդկաստանի խորհրդարան ֆինանսների նախարարության ներկայացրած տնտեսական տեղեկանքում[19] նշվեց, որ Հայաստանը դարձել է հնդկական զենքի թիվ մեկ խոշոր գնորդը:

Հնդկաստանի պաշտպանության նախարարության տվյալներով՝ 2024-2025 ֆինանսական տարիների կտրվածքով հնդկական սպառազինությունների Հայաստանի գնումների ծավալները հասել են 600 միլիոն դոլարի:

Հայաստանը ռազմական տեխնիկա է ձեռք բերել նաև Ֆրանսիայից: Հարավային Կովկասի պաշտպանական հարցերով Ֆրանսիայի նախկին ռազմական կցորդ, գնդապետ Ժան-Լյուկ Թեուսը Civilnet-ի հետ զրույցում հայտնել է [20], որ 2023-ի հոկտեմբերի 23-ին ստորագրված երկկողմ համաձայնագրով Ֆրանսիան Հայաստանին տրամադրել է և կտրամադրի պաշտպանական տեխնիկա, մասնավորապես՝ երեք Ground Master 200 (GM 200) ռադար և գիշերային տեսանելիության սարքեր: GM 200-ը ռադար է, որը հայտնաբերում, նույնականացնում և հետևում է թիրախին բոլոր տեսակի միջավայրերում և տեղեկություն է փոխանցում ցամաքային ՀՕՊ-ին՝ թիրախին հարվածելու համար: Դրա կիրառումը Հայաստանում կարող ծառայել փոքր ԱԹՍ-ների դեմ պայքարին, որոնք, ինչպես ցույց տվեց 2020-ի պատերազմը, հայկական բանակի ամենախոցելի կետերից են: Հայաստանի զինված ուժերը կստանան, ընդհանուր առմամբ, մոտ 50 Bastion զրահամեքենա: Ֆրանսիայի զինված ուժերի նախարար Սեբաստիեն Լեկորնուն հայտարարել է Mistral տեսակի հրթիռների գնման մասին: Այս հրթիռն օգտագործվում է սպառազինության համակարգերի լայն տեսականիում՝ նախատեսված ցածր և շատ ցածր բարձրություններում հակաօդային պաշտպանության համար:

18 https://www.gov.am/files/docs/5659.pdf

19 https://www.azatutyun.am/a/hayastany-dardzel-e-hndkakan-zenki-tiv-mek-khoshor-gnordy-/33047652.html

20 https://shorturl.at/VnftI

2024 թվականի հուլիսի 22-ին **Եվրոպայի խորհուրդը՝** Եվրոպական խաղաղության հիմնադրամի շրջանակում, առաջին անգամ ընդունեց **Հայաստանի Հանրապետության զինված ուժերին 10 մլն եվրո աջակցություն տրամադրելու որոշում**[21]:

Աջակցության նպատակն է բարձրացնել Հայաստանի զինված ուժերի նյութատեխնիկական կարողությունները և նպաստել ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում խաղաղ բնակչության պաշտպանության բարելավմանը: Այն նաև նպատակ ունի նպաստել Հայաստանի ճկունությանը և արագացնել ՀՀ զինված ուժերի փոխգործունակությունը միջազգային այդ թվում՝ ԵՄ-ի ռազմական առաքելությունների և գործողությունների հետ՝ դրանց հնարավոր հետագա մասնակցության դեպքում:

Աջակցությունը տրամադրվում է Հայաստանի հետ ԵՄ գործընկերության շրջանակներում, որը հիմնված է ընդհանուր արժեքների վրա և ուղղված է Հայաստանում և Հարավային Կովկասում խաղաղության, կայունության և բարգավաճման խթանմանը:

Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեֆ Բորելը նշել է, որ անվտանգությունը Հայաստանի հետ ԵՄ երկկողմ հարաբերությունների չափազանց կարևոր բաղադրիչներից է հավելելով, որ ԵՄ-ն և Հայաստանը փոխադարձ շահագրգռվածություն ունեն ավելի ընդլայնելու երկխոսությունն արտաքին և անվտանգության քաղաքականության շուրջ՝ դիտարկելով նաև Հայաստանի հետագա մասնակցությունը ԵՄ-ի գլխավորած առաքելություններին և գործողություններին:

Հիշեցնենք, որ դեռևս 2022 թ. սեպտեմբերի 29-ին կառավարության նիստի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսելով Հայաստանի դաշնակից պետությունների մասին՝ ընդգծեց Ադրբեջանի հաջողությունները Հայաստանի դաշնակից երկրների հետ հարաբերություններում և հայտարարեց[22], որ եղել են դեպքեր, երբ Հայաստանի կողմից 100 միլիոնավոր դոլարներ վճարված են եղել զենքի և ռազմական տեխնիկայի գնման համար, սակայն Հայաստանի նկատմամբ մատակարարումների պարտավորությունները չեն կատարվել, այդ թվում՝ դաշնակից երկրների կողմից: Այդ ժամանակ վարչապետը չհստակեցրեց, թե ՀՀ որ դաշնակից պետության մասին է խոսքը:

21 https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2024/07/22/european-peace-facility-council-adopts-the-first-ever-assistance-measure-in-support-of-the-armenian-armed-forces/
22 https://a1plus.am/hy/article/440847

Հետագայում հայտնի դարձավ, որ խոսքը Ռուսաստանի մասին է: Ռուսաստանից սպառազինության ձեռքբերման ծավալների նվազումը կարող է պայմանավորված լինել հենց այս հանգամանքով:

2023թ-ի համեմատ 2024-ին բյուջեի ամբողջ ծախսերի մեջ պաշտպանական ոլորտի ծախսերի մասը 1.3 %-ով նվազել է՝ 19.7 %-ից դառնալով 18.4 %[23]:

Պաշտպանական ոլորտի բյուջեի հրապարակումը միակ պաշտոնապես հրապարակված տվյալն է պաշտպանական ոլորտի գնումների վերաբերյալ: Հայաստանի պաշտպանական ոլորտի գնումների գործընթացները դեռևս խոցելի է կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից, քանի որ գնումների գործընթացում չի պահպանվում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ անվտանգության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովվում է ոլորտի գնումների վերաբերյալ պարբերաբար կատարված հրապարակումներով[24]:

ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի ու արդյունքների վերաբերյալ տեղեկանքում հայ-ռուսական հարաբերությունների մասին հիշատակվում է հիմնականում բարձրաստիճան պաշտոնյաների երկկողմ հանդիպումների համատեքստում: Ինչ վերաբերում է հայ-ռուսական ռազմական և անվտանգային ոլորտում համագործակցությանը, ապա այդ մասին կրկին հստակ տեղեկություններ չկան: Տեղեկանքում միայն նշվում է, որ «ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառությունը 2023 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 7,5 մլրդ ԱՄՆ դոլար, որը 2022 թվականի համեմատ աճել է 39.4 %-ով», սակայն առևտրաշրջանառության համատեքստում չի նշվում ռազմական և ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությանն ուղղված կոնկրետ գործողությունների մասին:

Ներկայացնենք ՀՀ կառավարության **2021-2026 թթ. ծրագրի 2023 թվականի կատարման վերաբերյալ տեղեկանքում հայ-ռուսական համագործակցությանն ուղղված գործողությունները:**

---

23 https://factor.am/695409.html#:~:text=2024%20%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB%201%2D%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4,%E2%80%A45%20%25%2D%D5%B8%D5%BE%20%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%AB%D6%89

24 https://www.defense.gov/News/Contracts/

Այսպես, ըստ ՀՀ կառավարության՝

- *ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջև 2023 թվականի ընթացքում տեղի են ունեցել 2 հանդիպում (մայիսի 25-ին Մոսկվայում և հունիսի 9-ին Սոչիում) և 9 հեռախոսազրույց:*
- *2023 թվականի օգոստոսի 24-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինի հանդիպումը:*
- *2023 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի համանախագահությամբ Երևանում կայացել է ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 22-րդ նիստը, որի ընթացքում, մասնավորապես, հաստատվել է 2023-2025 թթ. երկու երկրների կառավարությունների տնտեսական համագործակցության ծրագրի միջոցառումների պլանը:*
- *2023 թվականի ընթացքում կայացել է ՀՀ և ՌԴ արտաքին գործերի նախարարների 6 հանդիպում:*
- *2023 թվականի արդյունքներով ՀՀ-ի և ՌԴ-ի միջև առևտրաշրջանառությունը (ներմուծման ցուցանիշներն ըստ արտահանող երկրի) կազմել է շուրջ 7,5 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2022 թվականի համեմատ աճելով 39,4%-ով:*

Համեմատելով նախորդ տարիներին Կազմակերպության կողմից հրապարակված տեղեկանքները 2021[25] և 2022[26] թվականներին հրապարակած տեղեկանքներում նշված այցերի քանակը 2023 թ. կատարված այցերի հետ, արձանագրում ենք ՀՀ զինվորական պաշտոնյաների այցերը ՌԴ կտրուկ տարբերվում են իրարից, մասնավորապես 2021 թվականի տեղեկանքում ՀՀ բարձրաստիճան զինվորական պաշտոնյաները կատարել են առնվազն 18 այց ՌԴ, 2022-ին՝ 1 այց: Հիշեցնենք, որ ՌԴ կատարված պաշտոնական այցերը ողջ 2023 թվականին 2-ն են եղել: Այլ հանդիպումների մասին որևէ այլ տեղեկություն հայտնի չէ:

25 https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/

26 https://hcav.am/military-reforms-21/

Հայաստան-ՀԱՊԿ

2023 թվականի հունիսի 20-ին Մինսկում ՀՀ արտաքին գործերի նախարարի մասնակցությամբ կայացել է ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստը, որի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարը ներկաներին ներկայացրել է տարածաշրջանում, մասնավորապես, Հայաստանի և Ադրբեջանի սահմանին և ԼՂ-ում տեղի ունեցած զարգացումները: Հանդիպման ընթացքում Ադրբեջանի կողմից Հայաստանի՝ ՀԱՊԿ անդամ պետության ինքնիշխան տարածքի շարունակվող օկուպացիայի մասին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարն անդրադարձել է Հայաստանի ինքնիշխան տարածքի և միջազգայնորեն ճանաչված սահմանների նկատմամբ Ադրբեջանի շարունակական ագրեսիվ գործողություններին, ՀՀ-ի հետ սահմանին հայկական դիրքերի ու 24 քաղաքացիական օբյեկտների թիրախավորմանը: ՀՀ արտաքին գործերի նախարարը շեշտել է ՀԱՊԿ հասցեական արձագանքի պարտավորությունը: ՀՀ արտաքին գործերի նախարարն անդրադարձ է կատարել նաև ԼՂ-ում և ԼՂ-ի շուրջ ստեղծված լարված իրավիճակին, այդ թվում՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտում Ադրբեջանի սադրանքներին, 2023 թվականի հունիսի 15-ին Հակարիի կամրջի մոտ տեղի ունեցած միջադեպին, ինչպես նաև Լաչինի միջանցքի՝ ապօրինի արգելափակման հետևանքով ստեղծված հումանիտար խնդիրներին և Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների իրականացման խորացող վտանգին:

Բելառուսական կողմի նախաձեռնությամբ 2024 թ. նոյեմբերի 14-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ: Քննարկվել են ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի՝ նոյեմբերի 23-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայանալիք նիստի կազմակերպման հետ կապված հարցեր: Նոյեմբերի 22-ին Մինսկում կայացած ՀԱՊԿ ԱԳՆԽ, ՊՆԽ և ԱԽՔԿ համատեղ նիստին, ինչպես նաև նոյեմբերի 23-ին կայացած ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին, հայաստանյան կողմը մասնակցություն չի ունեցել: 2023 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարարն ընդունել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարին: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունը նվազագույնի է հասցրել, գործնականում սառեցրել է իր ակտիվությունը ՀԱՊԿ-ում:

2024 թ. մայիսի 22-ին Ազգային ժողովում կառավարություն հարցուպատասխանի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ «մեր դաշնակից» ՀԱՊԿ -ի անդամ առնվազն 2 երկիր 2020 թ-ի 44-օրյա պատերազմի նախապատրաստությանը մասնակցել են ոչ մեր կողմից՝ հավելելով, որ պատերազմի նպատակը եղել է «Հայաստանի անկախ պետության չգոյությունը»: Ըստ Փաշինյանի՝ «այդպիսի փորձեր 2020 -ի պատերազմից հետ էլի են եղել, 2021 -ի մայիսին, 2022 -ի սեպտեմբերին, 2023 -ի սեպտեմբերին, բայց չի ստացվել: Մի հատ էլ փորձեցին 2024 -ի մայիսի 9 -ին, էլի չստացվեց, ու էլի չի ստացվելու»

Թեև Հայաստանի կողմից ՀԱՊԿ անդամակցությունից հրաժարվելու մասին որևէ պաշտոնական տեղեկություն չկա, այնուամենայնիվ վերջին տարիներին Հայաստան-ՀԱՊԿ հարաբերությունների մակարդակը կտրուկ նվազել է:

Հայաստան-ՆԱՏՕ

2021-2026 թթ. ՀՀ Կառավարության ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2024 թվականի փետրվարին 27-ին հրապարակված տեղեկանքի համաձայն՝ հաստատվել է ՀՀ-ՆԱՏՕ Պլանավորման և վերանայման փաստաթուղթը՝ համագործակցության նպատակով, որը հնարավորություններ է ստեղծել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ երկկողմ ձևաչափով համագործակցության զարգացման համար:

Դիտարկվող ժամանակահատվածում Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

Հայաստան է այցելել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան:

Հայաստանը Կոսովոյում (KFOR) իր խաղաղապահ անձնակազմն ավելացրել է 17 ծառայողով՝ ընդհանուր հասցնելով 57-ի:

2023 թվականի ընթացքում ՆԱՏՕ-ի ներկայացուցիչների հետ քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ-ՆԱՏՕ Անհատապես հարմարեցված գործընկերության ծրագրի նախագիծը, որն արդեն ներկայացվել է դաշինքի անդամ երկրների հավանությանը:

ՆԱՏՕ-ի Պաշտպանական կրթության զարգացման հայաստանյան ծրագրի 2023 թվականի համագործակցության պլանի շրջանակներում իրականացվել են ռազմակրթական համակարգի բարեփոխումների խորհրդատվական մի շարք այցեր:

2023թ. հոկտեմբերի 6-ից 8-ը ՀՀ ԱԺ պատվիրակությունը մասնակցել է Կոպենհագենում կայացած ՆԱՏՕ ԽՎ տարեկան նստաշրջանին:

2023թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ ԱԳ նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում ՆԱՏՕ-ի միջազգային անձնակազմի պատվիրակության և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների միջև՝ ՀՀ-ՆԱՏՕ ԱՀԳԾ նախագծի քննարկման և համաձայնեցման նպատակով:

2024 թվականի հունվարի 18-ից 19-ը Հայաստան է ժամանել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինա Պիրիսը:

Ինչ վերաբերում է խաղաղապահ և կայունացման գործընթացներում ԱՄՆ-ի և Հայաստանի միջև փոխգործունակությունը, ապա հուլիսի 15-24-ը Հայաստանում անցկացվեց «Արծիվ գործընկեր-2024» հայ-ամերիկյան համատեղ զորավարժությունը, որի նպատակն է բարձրացնել միջազգային խաղաղապահ առաքելությունների մասնակցող ստորաբաժանման փոխգործակցելիության մակարդակը խաղաղապահ գործողությունների շրջանակում, իրականացնել կառավարման և մարտավարական հաղորդակցման լավագույն փորձի փոխանակում, ինչպես նաև բարձրացնել հայկական ստորաբաժանման պատրաստվածությունը:

Զորավարժությանը ներգրավված են եղել ՀՀ ԶՈՒ խաղաղապահ բրիգադի, Եվրոպայում և Աֆրիկայում ԱՄՆ ցամաքային զորքերի և Կանզասի ազգային գվարդիայի զինծառայողները[27]:

2024 թ. հուլիսի 11-ց 19-ը ՀՀ արտաքին գործերի նախարարությունը մասնակցել է Վաշինգտոնում ՆԱՏՕ-ի գագաթաժողովի՝ գործընկերների ձևաչափով միջոցառմանը և կազմակերպության 75-ամյակին նվիրված հարակից միջոցառումներին: Ավելի վաղ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնական Ջեյմս Օ՛Բրայենը Ադրբեջանում լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ հայտարարել էր, որ ԱՄՆ-ն

27 https://www.mil.am/hy/news/12275

Ադրբեջանին և Հայաստանին հրավիրել է ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակներում Վաշինգտոնում կայանալիք գործընկերների հանդիպմանը[28]:

Նախօրեին՝ հուլիսի 10-ին Վաշինգտոնում կայացել էր նաև ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եռակողմ հանդիպումը, որի ժամանակ, ըստ ՀՀ ԱԳՆ-ի, «Կողմերը նշել են խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման վերաբերյալ պատմական պայմանագրի կնքման ուղղությամբ Հայաստանի և Ադրբեջանի կողմից գրանցված առաջընթացը և համաձայնել են շարունակել աշխատանքները»[29]:

Այն փաստը, որ Ռուսաստանի հետ Հայաստանի ունեցած «դաշնակցային» հարաբերությունները շարունակում են մեծ դեր ունենալ Հայաստանի արտաքին քաղաքականությունում՝ սահմանափակելով նաև ՆԱՏՕ-ի հետ խորացված համագործակցությունը անհերքելի է, քանի որ Վաշինգտոնում կայացած գագաթաժողովից հետո Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը հայցտնեց, որ «Հայաստանը Ռուսաստանի հետ հարաբերություններում կառուցողական մոտեցման փոխարեն այլ ճանապարհ է ընտրել»[30]: Վերջինս նաև ընդգծել է, որ Հայաստանը շարունակում է մնալ ՀԱՊԿ անդամ և ռազմական ու ռազմատեխնիկական ոլորտներում Մոսկվայի հետ բազմաթիվ երկկողմ պայմանավորվածությունների մասնակից է:

Մինչդեռ մարտահրավերները, որոնց բախվում է Հայաստանը է վերջին տարիներին անվտանգային ոլորտում, հատկապես 2020-2023 թվականների ընթացքում տեղի ունեցած սահմանային լարվածությունների, մարտական գործողությունների ժամանակ, երբ Հայաստանը որևէ աջակցություն չստացավ դաշնակից ՀԱՊԿ-ից, թույլ է տալիս Հայաստանին խորացնել կապերը ՆԱՏՕ-ի հետ՝ հատկապես պաշտպանության և անվտանգային ոլորտներում: Աղյուսակում ներկայացված են Հայաստան-ՌԴ/ՀԱՊԿ, Հայաստան-ԵՄ և Հայաստան-ՆԱՏՕ պաշտպանական և անվտանգային ոլորտներին վերաբերող հանդիպումները ըստ Կազմակերպության հրապարակած տեղեկանքներն

28 https://armenpress.am/hy/article/1194717

29 https://hetq.am/hy/article/168022

30 https://ria.ru/20240711/nato-1958883284.html

ընդգրկող ժամանակահատվածների(2021-2024 թթ.)։ Աղյուսակում ներկայացված հանդիպումների մասին տվյալները վերցված են ԶԼՄ-ներից և պաշտոնական հաղորդագրություններից, ուստի կարող են ոչ ամբողջական լինել։

Աղյուսակ 2. 2020 – 2024 թթ ՀՀ-ՌԴ/ՀԱՊԿ, Հայաստան-ԵՄ և Հայաստան-ՆԱՏՕ պաշտպանական և անվտանգային ոլորտի փոխգործակցության շրջանակներում հանդիպումների թիվը

Հանդիպման ժամանակահատվածը	Հայաստան-ՌԴ/ՀԱՊԿ	Հայաստան-ԵՄ Հայաստան-ՆԱՏՕ, անդամ պետություններ
2020 նոյեմբեր-2021 նոյեմբեր	18	0
2021 դեկտեմբեր -2022 հունիս	4	7
2022 հուլիս-2023 հուլիս	5	8
2023 օգոստոս-2024 հուլիս	2	16
Ընդամենը	**29**	**31**

Աղյուսակից ակնհայտ երևում է, որ 2020 թվականի նոյեմբերից 2021 թվականի նոյեմբեր ընկած ժամանակահատվածի համեմատությամբ կտրուկ կրճատվել է Հայաստան-ՌԴ/ՀԱՊԿ հանդիպումների թիվը։ Ակնհայտ է, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Ռուսաստանի Դաշնությանը չի դիտարկում որպես ռազմավարական դաշնակից կամ առնվազն լուրջ ակնկալիքներ չունի հաշվի առնելով նաև ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի կողմից դրսևորվող պասիվությունն ու հայտարարությունն այն մասին, որ ՀՀ-ն գործնականում սառեցրել է ՀԱՊԿ անդամակցությունը[31] : Միևնույն ժամանակ հակառակ պատկերն է Հայաստան-ԵՄ և Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների դեպքում. այստեղ էլ կարող ենք արձանագրել, որ թե՛ ԵՄ, թե՛ ՆԱՏՕ հարաբերություններում նկատվում է հանդիպումների և քննարկումների ինտենսիվության աճ։

Միաժամանակ հատկանշական է, որ ԱՄՆ-ի և ԵՄ անդամ պետությունների զինված ուժերի հետ համատեղ զորավարժությունները շարունակական բնույթ են կրում։

31 https://www.youtube.com/watch?v=x9KZAyuRTSc

Համեմատելով նախորդ տարիներին Կազմակերպության կողմից հրապարակված տեղեկանքները, 2021[32] և 2022[33] թվականներին այցերի քանակը 2023 թ. կատարված այցերի հետ, արձանագրում ենք ՀՀ զինվորական պաշտոնյաների այցերը ՌԴ կտրուկ տարբերվում են իրարից, մասնավորապես 2021 թվականի տեղեկանքում ՀՀ բարձրաստիճան զինվորական պաշտոնյաները կատարել են առնվազն 18 այց ՌԴ, 2022-ին՝ 1 այց: Հիշեցնենք, որ ՌԴ կատարված պաշտոնական այցերը ողջ 2023 թվականին 2-ն են եղել: Այլ հանդիպումների մասին որևէ այլ տեղեկություն հայտնի չէ:

Դիտարկենք, թե սպառազինության ձեռք բերման մասին տարածված տեղեկությունների հաճախականությունը ինչպես է փոփոխվել Կազմակերպության հրապարակած տեղեկանքներն ընդգրկող ժամանակահատվածներում և Հայաստան-ՌԴ/ՀԱՊԿ, Հայաստան-ԵՄ/ՆԱՏՕ հանդիպումների ֆոնին:

Այսպես, 2020 նոյեմբեր-2021 նոյեմբեր ժամանակահատվածում առկա է միայն տեղեկություն Հնդկաստանից ձեռք բերված չորս Swathi ռադարների մասին, պայմանագրի արժեքը ըստ շրջանառվող տեղեկությունների կազմել էր 40 մլն դոլար:

2021 թ. դեկտեմբերին Մոսկվայում անցկացվող «Армия 2021» ռազմարդյունաբերական ցուցահանդեսի շրջանակում Հայաստանը սպառազինության մատակարարման պայմանագիր կնքեց ռուսաստանյան ընկերությունների հետ, սակայն պայմանագրով ձեռք բերվող սպառազինության ծավալների մասին որևէ տեղեկություն չտարածվեց:

2022 թ. ընթացքում սպառազինության ձեռքբերման մասին միակ պաշտոնական հաղորդագրությունը հրապարակվեց 2022 թ. հունվարի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում, հաղորդագրության մեջ նշվում էր այն մասին, որ ՀՀ զինված ուժերի ավիացիան համալրվել է ժամանակակից, բազմաֆունկցիոնալ նոր ուղղաթիռներով, որոնք նախատեսված են դեսանտային, կրակային, տրանսպորտային և սանիտարական խնդիրներ կատարելու համար, սակայն կրկին առանց ծավալների մասին տեղեկություն տարածելու:

32 https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/

33 https://hcav.am/military-reforms-21/

Փաստացի 2021 թվականի դեկտեմբերից մինչև 2022 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում սպառազինության ձեռք բերման մասին տեղեկություն է տարածվել 2 անգամ, որից 1-ը՝ պաշտոնական հաղորդագրությամբ:

2022 թվականի հուլիսից 2023 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում տեղեկություն տարածվեց Հայաստան-Հնդկաստան ռազմամթերքի և ռազմատեխնիկայի մատակարարման պայմանագրի մասին, գործարքի գինը գնահատվում է մոտ 245 մլն դոլար: Սա նաև այն ժամանակահատվածն էր, երբ Հայաստանը սկսեց դիվերսիֆիկացնել սպառազինության ձեռք բերման ռիսկը և բացի Ռուսաստանի Դաշնությունից գործընկեր դիտարկվեց նաև Հնդկաստանից:

Արդեն 2023 թվականի օգոստոսից 2024 թվականի հուլիսն ընդգրկող ժամանակահատվածում հայտարարվեց Ֆրանսիայից և Հնդկաստանից ձեռք բերվող սպառազինության մասին: Ավելին, նշվեց, որ 2024-2025 թվականների համար Հնդկաստանից սպասվող ռազմատեխնիկայի և ռազմամթերքի արժեքը կազմում է 600 մլն դոլարից ավելի:

Փաստորեն, Հայաստան-ՌԴ/ՀԱՊԿ գործընկերային հանդիպումների նվազման և միևնույն ժամանակ Հայաստան-ԵՄ/ՆԱՏՕ հանդիպումների ինտենսիվության ավելացմանը զուգահեռ առավել հաճախակի դարձան սպառազինության թեման և դրա մասին տարածվող տեղեկությունները:

Առաջնահերթություն 5

Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման նպատակով «կյանքի են կոչվելու տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերը: Ներգրավված

ուժերի և տեխնիկական նոր լուծումների միջոցով կատարելագործվելու է ՀՀ պետական սահմանի պահպանության համակարգը»:

Հիշեցնենք, որ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման նպատակով ՀՀ կառավարության կողմից կատարված փոփոխությունների շրջանակներում ՀՀ-ում սկսեցին առավել հաճախակի պարբերականությամբ վարժական հավաքներ անցկացնել 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո:

2021 թ անց է կացվել 2 վարժական հավաք՝ մեկամսյա և եռամսյա: 2022 թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից հայտարարվեցին վեց վարժական հավաքներ[34]:

Նկատենք, որ հենց 2022 թվականից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը սկսեց առավել հաճախ ահազանգեր ստանալ պահեստազորում հաշվառված անձանցից[35]:

Քաղաքացիներն իրենց ահազանգերով բարձրաձայնում են մի շարք խնդիրների՝ վարժական հավաքներին մասնակցելու մասին ծանուցման ժամկետների, բժշկական հետազոտությունների ոչ պատշաճ իրականացման, ընտանեկան պայմաններից ելնելով հավաքներին անձանց ներգրավելու և այլ խնդիրների մասին:

2024 թվականի հունվարի 16-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվեց նախագիծ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին:

Օրենքի նախագծի համաձայն հստակեցվում են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, վարժական հավաքների և զինվորական վարժանքների կազմակերպման և անցկացման շրջանակներում քաղաքացիներին իրենց զինվորական հաշվառման վայրի մարմին ներկայանալու համար տրվող պատշաճ ծանուցումների եղանակները՝ փաստաթղթային կամ օրենքով սահմանված անհատական կամ հրապարակային, ինչպես նաև քաղաքացու կողմից դրանց ստացումը հաստատող փաստաթղթերի և հանգամանքների շրջանակը[36]:

---

34 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159525 , https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160890, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160867, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164587, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167833, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168906

35 https://hcav.am/hcav-am-03-02-2023/

36 https://www.e-draft.am/projects/6756

Նախագծում որպես իրավական ակտի ընդունման հիմնավորում ներկայացվել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի եւ պահեստազորային պատրաստության միջոցառումների կազմակերպման եւ անցկացման շրջանակներում քաղաքացիներին իրենց զինվորական հաշվառման վայրի մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումների գործընթացը հստակեցնելու անհրաժեշտությունը:

Կազմակերպությունը խնդրահարույց է համարել նման մոտեցումը, գտնելով, որ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչին մասնակցելու համար պետք է ապահովվի քաղաքացու պատշաճ ծանուցումը եւ անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր լինի ապացուցել քաղաքացու պատշաճ տեղեկացված լինելու փաստը, այսինքն պետք է ձեռնարկել անհրաժեշտ եւ բավարար միջոցներ՝ ապահովելու համար քաղաքացու տեղեկացված լինելու իրավունքը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, վարժական հավաքների և զինվորական վարժանքների կազմակերպման և անցկացման շրջանակներում քաղաքացիներին իրենց զինվորական հաշվառման վայրի մարմին ներկայանալու համար տրվող պատշաճ ծանուցումների եղանակները սահմանել փաստաթղթային՝ միաժամանակ համաձայնության դեպքում նաև օրենքով սահմանված անհատական կամ հրապարակային կարգով:

2024 թ. մայիսի 22-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված ՀՕ-239-Ն օրենքով[37] կատարվեցին փոփոխություններ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 20-րդ հոդվածում: Մասնավորապես, հոդվածը լրացվեց հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ և 60-րդ հոդվածի 3-րդ մասերի իմաստով **քաղաքացուն պատշաճ ծանուցում է համարվում ծանուցագիրը փաստաթղթային կամ փոստային կապի միջոցով կամ անհատական կամ հրապարակային եղանակով տրամադրելը**:

37 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193799

5. Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն **քաղաքացուն պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ կամ հանգամանք են համարվում՝**

1) **ծանուցագիրն առձեռն հանձնելու դեպքում՝ ծանուցագիրը ստանալու մասին քաղաքացու ստորագրությամբ հաստատված ստացականը.**

2) փոստային կապի միջոցով ծանուցման դեպքում՝ ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակը քաղաքացուն հանձնված լինելը հաստատող փաստաթուղթը կամ էլեկտրոնային հավաստումը.

3) անհատական ծանուցման դեպքում՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագիրը քաղաքացու կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը.

4) **հրապարակային ծանուցման դեպքում՝ օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն ուղղված ծանուցագրի քաղվածքի տեղադրումը:**

6. Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն քաղաքացուն ծանուցումն առաջնային իրականացվում է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցագիրն ուղարկելու միջոցով՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի առկայության դեպքում: Ընդ որում, քաղաքացու համաձայնության պարագայում սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացու ծանուցումը կարող է իրականացվել բացառապես նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագրի միջոցով, որի դեպքում եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը, ապա քաղաքացին պատշաճ ծանուցված է համարվում ծանուցումն ստանալուն հաջորդող հինգերորդ օրվանից: Քաղաքացու կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ չունենալու կամ քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագիրը քաղաքացու կողմից ստանալու մասին էլեկտրոնային հավաստման (եթե առկա չէ սույն մասում նշված համաձայնությունը) բացակայության դեպքերում քաղաքացու ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն կամ փոստային պատվիրված նամակով հանձնելու միջոցով: Ծանուցագիրն առձեռն հանձնելու անհնարինության կամ առձեռն հանձնվող ծանուցագիրը քաղաքացու կողմից ստանալուց հրաժարվելու կամ

ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակը քաղաքացուն հանձնված լինելը հաստատող փաստաթղթային կամ էլեկտրոնային հավաստման բացակայության կամ քաղաքացու կողմից փոստային պատվիրված նամակը ստանալուց հրաժարվելու դեպքերում քաղաքացու ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն ուղղված ծանուցագրի քաղվածքը տեղադրելու օրվանից հետո՝ տասներորդ օրը, քաղաքացին համարվում է ծանուցված: Սույն մասի համաձայն առձեռն հանձնվող ծանուցագիրը կամ ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակն ստանալուց քաղաքացու հրաժարումը գրավոր արձանագրվում է ծանուցագիրն առձեռն կամ փոստային պատվիրված նամակը հանձնող անձի կողմից՝ նշելով հրաժարման օրը, ամիսը, տարին և ժամը:»:

Մինչ նշված փոփոխությունը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում էր, որ պահեստազորում հաշվառված անձանց զինվորական վարժանքի կամ զորավարժության ներգրավում են ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից **տրված փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման** համաձայն, իսկ այժմ բացի նշված միջոցներից պատշաճ ծանուցում է համարվում նաև անհատական կամ հրապարակային եղանակով ծանուցումը:

Այսինքն, սույն առաջնահերթությամբ սահմանված զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործմանն ուղղված Կառավարության քայլերից է քաղաքացուն վարժական հավաքներին ներգրավելու պատշաճ ծանուցման մեխանիզմի կատարելագործումը, մինչդեռ ինքնին զորահավաքային նախապատրաստության գործընթացում առկա են մի շարք խնդիրներ, որոնց վերաբերյալ Կազմակերպությունը շարունակաբար ստանում է ահազանգեր քաղաքացիների կողմից:

Ներկայացնենք 2023 և 2024 թվականների վարժական հավաքների կազմակերպման և իրականացման ընթացքում արձանագրված խնդիրները.

- պահեստազորայինները վարժական հավաքներին ներգրավվելու համար ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (ԶԶՀԾ) տարածքային

ստորաբաժանումներ ներկայանալու մասին ծանուցվում են ոչ թե փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման եղանակով, ինչպես սահմանված էր օրենքով մինչև 2024 թ. մայիսին կատարված փոփոխությունները, այլ հեռախոսազանգով, որոշ դեպքերում նաև ոչ անմիջապես, այլ իրենց հարազատների միջոցով:

- **Պահեստազորայինների բժշկական հետազոտությունը հիմնականում իրականացվում է բանավոր՝ հակիրճ հարց ու պատասխանի միջոցով, և դրա արդյունքում անձինք ճանաչվում են պիտանի վարժական հավաքների մասնակցելու համար** և ստանում ծանուցագրեր վարժական հավաքների մեկնելու մասին՝ առանց անհրաժեշտ և պարտադիր բժշկական հետազոտություններ անցնելու:
- Պահեստազորում հաշվառված անձինք նաև ահազանգում են, որ ՀՀ ՊՆ ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումներում ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ կա ընդգծված բացասական վերաբերմունք: Պահեստազորայիններից մեկից պահանջել են ներկայացնել «համապատասխան փաստաթուղթ», որը վկայում է անձի սեռական կողմնորոշման մասին:
- Թեև Կառավարությունը փորձում է կարգավորել վարժական հավաքների կանչվող քաղաքացիների աշխատավարձի պահպանման հետ կապված հարցերը՝ գործատուին առաջարկելով յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողին վճարել հիմնական աշխատավարձի և որպես զինծառայողի հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը: Մինչդեռ **հստակ չէ, թե ինչպես պետք է կարգավորվում, օրինակ, անհատ ձեռներեց հանդիսացող պահեստազորում հաշվառված անձի աշխատավարձի խնդիրը այն դեպքում, երբ վերջինս իր բացակայության ընթացքում եկամուտ չի ունենում, ինչը հանգեցնելու է նրա ֆինանսական վիճակի վատթարացմանը: Պահեստազորայինները հետագայում առնչվում են այլ՝ վարկային պարտավորությունների չկատարումից բխող խնդիրների, քանի որ իրենց ամսական եկամուտը շատ ավելի բարձր է,** քան սահմանված է ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» որոշմամբ՝ որպես նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ:

- Վարժական հավաքների շրջանակներում պահեստազորայիններին զորամաս ուղերկելուց հետո հրամանատարները վերջիններիս հայտնում են, որ զորամասին պետք չեն վերջիններիս մասնագիտություններով պահետազորայիններ և որ նրանց «անիմաստ են ուղարկել այնտեղ»։ Բացի այդ պահեստազորայիններին հայտնել են, որ նրանց «այդ ժամին չէին սպասում» և որ իրենց համար «սնունդ նախատեսված չէր», հետևաբար պահեստազորայինները մի քանի ժամ ստիպված են եղել սպասել մինչև ապահովվեն սնունդով։
- Չնայած այն հանգամանքին, որ վարժական հավաքները հայտարարվում են հստակ մասնագիտություններով, մինչդեռ պահեստազորայիններն ահազանգում են նաև այն մասին, որ իրենք վարժական հավաքների ներգրավվում են ոչ իրենց զինվորական մասնագիտությունների համապատասխան, նրանց հետ չեն իրականացվում համապատասխան վարժանքներ և դրանք հաճախ կրում են ֆորմալ բնույթ։ Պահեստազորայիններն ահազանգում են, որ իրենք վարժական հավաքների են ներգրավվում միայն մարտական հերթապահության իրականացման համար։
- Պետական կառույցները իրենց աշխատակից՝ վարժական հավաքների կանչված քաղաքացիներին դժվարությամբ են թույլատրում բացակայել աշխատավայրից՝ բուժզննություններ անցնելու նպատակով, նույնիսկ առաջարկում են արձակուրդ ձևակերպել ընդամենը մի քանի ժամ բացակայելու պատճառով։

Ինչ վերաբերում է 2024 թ. մայիսին ՀՀ պաշտպանության նախարարությանը հասցեագրված Կազմակերպության հարցման պատասխանին, ապա սույն առաջնահերթության կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին ՀՀ ՊՆ-ից հայտնել են, որ «վարժական հավաքների ընթացքում առավել ուշադրություն է դարձվում սպաների և զորամասերի մարտունակությունն ապահովող զինվորական հաշվառման մասնագիտություններ ունեցող պահեստազորայինների պատրաստմանը։ Այս գործընթացի արդյունքում զորքերն աստիճանաբար համալրվում են ավելի պատրաստված ու անհրաժեշտ զինվորական հաշվառման մասնագիտություն ունեցող պահեստազորայիններով, ինչպես նաև ազատ ռեսուրսում կուտակվում են պատրաստված պահեստազորայիններ։ Վարժական հավաքներն անցկացվում են նաև պահեստազորայինների մարտական հերթապահության ներգրավմամբ»։

Ելնելով Կազմակերպությանը դիմած պահեստազորում հաշվառված անձանց ներկայացրած խնդիրներից, կարող ենք արձանագրել, որ չնայած ՀՀ պաշտպանության նախարարությունը նշում է, որ «վարժական հավաքների ընթացքում առավել մեծ ուշադրություն է դարձվում սպաների և զորամասերի մարտունակությունն ապահովող զինվորական հաշվառման մասնագիտություններ ունեցող պահեստազորայինների պատրաստմանը», մինչդեռ վարժական հավաքներին պահեստազորայիններին ներգրավելիս հաշվի չեն առնվում վերջիններիս զինվորական մասնագիտությունները և նրանք փաստացի հանդիսանում են միայն մարդկային ռեսուրս մարտական հերթապահության իրականացման համար:

Նույն պատասխանում նշվում է նաև, որ «պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների ղեկավար կազմի զորահավաքային նախապատրաստության հարցերով ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման նպատակով ԶՈՒ գլխավոր շտաբում մշակվել է ՀՀ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների զորահավաքային մասնագետների պատրաստման (վերապատրաստման) 10-օրյա պատրաստության ծրագիր, որն ուղարկվել է Անվտանգության խորհրդի գրասենյակ՝ հետագա գործընթացն ապահովելու նպատակով: Ծրագրի նպատակն է՝ զարգացնել պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպություններում զորահավաքային հարցերով զբաղվող կազմի և զինվորական ղեկավարների (զինղեկների) ունակությունները, ինչպես նաև բարձրացնել զորահավաքի էության և խնդիրների կատարման ուղղությամբ գործառութային պարտականությունների վերաբերյալ գիտելիքները:

Ինչ վերաբերում է վարժական հավաքների անցկացման ընթացքում անվտանգության պահպանմանը, ապա նշենք, որ 2021 թ-ից ի վեր, երբ վարժական հավաքները սկսեցին պարբերաբար անցկացվել, արձանագրվել են պահեստորայինների մահվան դեպքեր՝ վարժական հավաքների ընթացքում:

2021 թ. ՀՀ զինված ուժերում գրանցվել է պահեստազորայինների մահացության 3 դեպք, որոնցից 2-ը՝ ծառայակցի կողմից մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտման, մյուսը՝ դժբախտ պատահարի հետևանքով՝ մեքենան նորոգելիս:

2022 թ. մահացել է 5 պահեստազորային, որոնցից 1-ը պաշտոնական տվյալներով ինքնասպանություն է գործել, 1-ը սպանության հետևանքով, 1-ը՝ դժբախտ պատահարի, 1-ը՝ ավտովթարի, 1-ը՝ առողջական խնդիրների: 2023 թվականին վարժական հավաքների ընթացքում մահացած պահեստազորայինների թիվը 5 է, որոնցից 4-ը զոհվել են հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով, ևս մեկ պահեստազորայինի մահվան պատճառն ավտովթարն է: 2024 թվականին առաջին կիսամյակում մահացել է 1 պահեստազորային՝ զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի կացարանին կից տեղադրված տնակում բռնկված հրդեհի հետևանքով:

Վարժական հավաքների ժամանակ պահեստազորայինների մահվան՝ հատկապես սպանության, ինքնասպանության հասցնելու, անվտանգության կանոնների խախտման հետևանքով դեպքերը կարող են պատճառ հանդիսանալ զորահավաքային նախապատրաստության գործընթացի նկատմամբ քաղաքացիների անվստահության աճի: Ինչ վերաբերում է առողջական խնդիրների հետևանքով վարժական հավաքների ընթացքում պահեստազորայինների մահվան դեպքերին, ապա այն վկայում է զորահավաքային նախապատրաստության փուլում ոչ պատշաճ և թերի բժշկական հետազոտությունների իրականացման մասին:

Կազմակերպությունը բազմիցս բարձրաձայնել է պահեստազորայինների վարժական հավաքների ընթացքում արձանագրված խնդիրների[38] վերաբերյալ:

Կարևորելով վարժական հավաքների իրականացման նշանակությունը պետության անվտանգային խնդիրների համատեքստում, նաև վարժական հավաքների իրականացման ընթացքում արձանագրված խնդիրների մի մասը լուծելու ուղղությամբ պետության

38 https://hcav.am/varjakan-havaqner/ ,
https://hcav.am/hcav-am-03-02-2023/ ,
https://hcav.am/hcav-am-15-02-2023/
https://hcav.am/wp-content/uploads/2024/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D4%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9-2023.pdf

ջանքերը, միաժամանակ ընդգծում ենք բոլոր խնդիրների վերացման ուղղությամբ արդյունավետ աշխատանք իրականացնելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Ամփոփելով սույն առաջնահերթության կատարումը, կրկին արձանագրում ենք, որ ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման, տարածքային պաշտպանության համակարգի ծրագրերի ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը բացառապես պետք է հիմնվեն պահեստազորում հաշվառված անձանց իրավունքների երաշխավորման վրա:

Առաջնահերթություն 6

Ռազմական կրթության որակի էական բարձրացում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվում է, որ «ռազմական կրթության և գիտության զարգացումը լինելու է Կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Վերանայվելու են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացները, որոնք համապատասխանեցվելու են Զինված ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին: Ռազմական գործողությունների բնույթի կերպափոխման, տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացի, տեղեկատվական ու հոգեբանական ազդեցությունների ավելացման պայմաններում ռազմական կրթությունը լինելու է ապագայամետ՝ նախապատրաստելով հնարավոր պատերազմներին պատրաստ արհեստավարժ զինվորականներ: Կառավարությունը հետամուտ է լինելու նաև ռազմական գիտության զարգացմանը, որի շրջանակներում վերանայվելու են պատերազմավարման հիմնադրույթները, մարտական գործողությունները պլանավորելու և վարելու ձևերը»:

2022 թվականի հուլիսի 21-ին ՀՀ կառավարության թիվ 1098-Ն որոշմամբ հաստատվեց ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության նոր կարգը: Բարձրագույն ռազմավարական կրթական ծրագրով ընդունելությանը (ընտրությանը) կարող են մասնակցել զորամիավորման հրամանատարի տեղակալի և միավորման

հրամանատարի, ինչպես նաև դրանց հավասար պաշտոն զբաղեցնող, բարձրագույն ռազմական կրթության մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող մինչև 50 տարեկան սպայական կազմի զինծառայողները: Բարձրագույն ռազմավարական կրթական ծրագրով ընդունելությունը (ընտրությունը) իրականացվում է հարցազրույցի միջոցով: Մինչ այս փոփոխությունը տարիքային սահմանափակումը սահմանված էր մինչև 48 տարեկան:

Ըստ փոփոխության, գումարտակի, դիվիզիոնի կամ էսկադրիլիայի հրամանատարի, ինչպես նաև դրանց հավասար պաշտոն զբաղեցնող՝ մինչև 40 տարեկան սպայական կազմի զինծառայողները կարող են մասնակցել բարձրագույն ռազմական կրթական ծրագրով ընդունելությանը, նախկինում ընդունելությանը կարող էին մասնակցել մինչև 37 տարեկան սպայական կազմի զինծառայողները[39]:

Կազմակերպության 2024 թ. մայիսի 30-ի հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ռազմական կրթության ոլորտում խորացվել է համագործակցությունը օտարերկրյա պետությունների հետ, արդյունքում ինչպես լրացուցիչ, այնպես էլ հիմնական կրթական ծրագրերի շրջանակներում ավելացել է պատրաստություն և վերապատրաստում անցնող ՀՀ զինծառայողների քանակը: Բացի այդ, ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում պլանավորվում է նաև օտարերկրյա զինծառայողների պատրաստում և վերապատրաստում:

Նշենք, որ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիան 2024 թվականի հունվարի 9-ից ընդգրկվել է Ռազմական ակադեմիաների միջազգային ասոցիացիայի կազմում[40]:

Անդամակցելով միջազգային ասոցիացիային, որի անդամ են տարբեր երկրների (ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Ֆրանսիա, Շվեդիա, Իսպանիա, Բրազիլիա, Կատար, Լեհաստան, Հարավային Կորեա, Հարավային Աֆրիկա, Կոլումբիա, Ֆիլիպիններ, Կոսովո), 19 ռազմական ակադեմիաներ, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիան միջազգային լայն համագործակցության նոր հնարավորություններ է ստանում, մասնավորապես՝ օգտվելու աշխարհի առաջատար ռազմաուսումնական

39 https://www.arlis.am/documentview.aspx?docid=166269

40 https://www.mil.am/hy/news/11932

հաստատությունների կրթական բազմաթիվ ծրագրերից, այդ թվում՝ ուսանողների փոխանակում, դասախոսների վերապատրաստում և փոխանակում, կրթական համատեղ ծրագրերի իրականացում, վարժանքներ և այլն: Այս շրջանակներում 2024 թ. դեկտեմբերի 14-ին Հունաստանի Հանրապետություն այցի շրջանակներում պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն այցելել է Հունաստանի ցամաքային զորքերի ռազմական ակադեմիա, որտեղ հանդիպել է ակադեմիայի հրամանատարության և ակադեմիայում սովորող հայ կուրսանտների հետ: Նախարարին հանգամանալից ներկայացվել են ռազմական ակադեմիայի գործունեությունն ու կրթական ծրագրեր[41]:

2024 թվականի փետրվարի 2-ին Ֆրանսիայի զինված ուժերի Սեն-Սիր ռազմական ակադեմիայի ղեկավար կազմի ներկայացուցիչները այցելել են Հայաստանի պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա: Քննարկվել են ակադեմիաների փոխգործակցությանն առնչվող հարցեր[42]:

Նույն օրը պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանի և Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դրկոտինյիի մասնակցությամբ ակադեմիայում բացվել է ֆրանսերենի՝ ժամանակակից լուծումներով հագեցած լսարան:

Հայաստանի և Ֆրանսիայի միջև ռազմական համագործակցության շրջանակում նախատեսված է նաև անձնակազմի կրթության, նախապատրաստության, փորձի փոխանակման, խորհրդատվական աջակցություն:

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում լրացուցիչ կրթական ծրագրերի շրջանակներում ներդրվել են նոր ծրագրեր, որոնք ուղղված են ԶՈՒ հետախուզական, տեխնիկական սպասարկում իրականացնող և կադրային ստորաբաժանումների զինծառայողների մասնագիտական գիտելիքների զարգացմանը:

Փոփոխություն է տեղի ունեցել ռազմական ակադեմիայի ցամաքային զորքերի ինստիտուտի բակալավրի կրթական ծրագրում, նախկին 4 տարվա կրթական ծրագիրը 2024/2025 ուսումնական տարվանից դառնում է 5 տարի:

41 https://www.mil.am/hy/news/11896

42 https://www.azatutyun.am/a/32803816.html

2023 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1825-Լ որոշմամբ ՊՆ նոր կանոնադրությամբ, որպես առանձին ստորաբաժանում, ձևավորվել է ՊՆ ռազմագիտակրթական քաղաքականության վարչությունը, որի կանոնադրությամբ սահմանվել են նորաստեղծ ռազմական գիտության բաժնի գործառույթները։

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, այս պահին գնահատվում են ՊՆ համար առաջնահերթություն ունեցող գիտական հետազոտությունների կարիքները և դրանք իրականացնելու պոտենցիալ հնարավորությունները։

2023 թվականին հաստատվել են ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերը և այդ կազմի ընտրության, թափուր պաշտոնների համալրման կարգերը։ Բարձրացվել են ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովության չափերը, սահմանվել է առաջադիմությամբ պայմանավորված դրամական ապահովության չափերի ավելացման բանաձևը։ Հիմնավորման համաձայն՝ կուրսանտների համար սահմանված ամսական դրամական ապահովության չափերը բավականին ցածր են՝ հաշվի առնելով, որ խոսքը գնում է ապագա սպաների մասին, որոնց ուսումնառության պատշաճ կազմակերպման, արժանապատիվ կեցության ապահովման հանգամանքն էական նշանակություն ունի սպայի կերպարի ձևավորման, զինվորական ծառայության ընտրության նկատմամբ վստահության և գրավչության գործընթացի համար։

Ըստ նոր կարգի՝ 1-ին կուրսի կուրսանտի ամսական դրամական ապահովության չափը կազմում է 15000 դրամ, 2-րդ կուրսի կուրսանտինը՝ 20000 դրամ, 3-րդ կուրսի կուրսանտինը՝ 25000 դրամ, 4-րդ կուրսի կուրսանտինը՝ 30000 դրամ, 5-րդ և բարձր կուրսի կուրսանտինը՝ 35000 դրամ։ Սահմանվում են նաև միջին որակավորման գնահատականի հիման վրա գործակիցներ, հետևյալ սկզբունքով՝ 60-ից մինչև 70,99 ՄՕԳ-ի պարագայում սահմանում ենք 3 գործակից, 71-ից մինչև 79,99-ի դեպքում 4 գործակից, 80 տոկոս և բարձրի դեպքում 5 գործակից։ Սա ենթադրում է հետևյալը՝ գործակիցների ՄՕԳ-ի պարագայում, առաջին կուրսի կուրսանտը տարբեր առաջադիմությունների դեպքում կարող է ստանալ 45000-ից մինչև 75000 դրամ, երկրորդ կուրսում՝ 60000-80000 դրամ, երրորդ կուրսում՝ 75000-125000 դրամ, չորրորդ կուրսում՝ 90000-150000 դրամ, հինգերորդ

և բարձր կուրսում՝ 105000-175000 դրամ: Այսինքն՝ գերազանց սովորող կուրսանտը, հինգերորդ կուրսում կարող է ամսական ստանալ 175000 դրամ:

Կառավարության որոշմամբ սահմանվում են ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կրթական ծրագրերը, ընդունելության պայմանները, ընդունելության կազմակերպման ընթացակարգերը, մարմինները, չափորոշիչները և արդյունքների բողոքարկման կարգը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատում է ՀՀ կառավարությունը: Նշված կարգը գործում է ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 525-Ն որոշմամբ, սակայն, անհրաժեշտություն է առաջացել նորովի սահմանել Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում ուսանելու համար զինծառայողների ընտրության հետ կապված գործընթացը, հստակեցնել այն կրթական ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվում է ընդունելությունը, ընդունելության պայմանները և կազմակերպման կարգը:

ՀՀ կառավարության հնգամյա (2021 - 2026 թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների առաջնահերթությունների կատարման ուղղությամբ նախորդ՝ 2023 թվականի դրությամբ իրականացված քայլերի վերաբերյալ Կազմակերպության հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել էր, որ իրականացվում են աշխատանքներ Զինված ուժերում «Արհեստավարժ սերժանտական համակարգի» ներդրման ուղղությամբ: Տեղեկացվել էր նաև, որ Զինված ուժերում իրականացվել է նորագույն տեխնոլոգիաների և վարժասարքերի ներդրմամբ ուսումնանյութական բազայի զարգացում և կատարելագործում: Այս անգամ պաշտպանության նախարարությունը որևէ կերպ չի անդրադարձել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Այսպես, անդրադառնալով սույն առաջնահերթության կատարմանը, նշենք, որ ծավալուն աշխատանքներ են կատարվել զինված ուժերում կադրերի պատրաստման

նպատակով միջազգային ռազմաուսումնական հատատությունների հետ համագործակցության ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, դեռևս արդիական է մնում զինված ուժերում որակյալ սպայական անձնակազմով համալրման խնդիրը: Ի վերջո հասկանալի է, որ ռազմական կրթության բնագավառում իրականացվող քայլերի արդյունավետության մասին կարելի կարծիք կազմել առնվազն 5-7 տարի հետո, միևնույն ժամանակ զուգահեռաբար պետք է լուծվեն ներկա պահին զինվորական ծառայության կազմակերպման, անվտանգային խնդիրների արդյունավետ լուծման հարցերը, որոնք ցավոք ուղեկցվում են մահացության անթույլատրելի դեպքերով, որոնցում ակնհայտ հիմնական պատժառներից մեկը որակյալ սպայական և հրամանատարական կազմի պակասն է:

Առաջնահերթություն 7

Տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության ոլորտի բարեփոխում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ նախատեսվում է կատարելագործել օրենսդրական դաշտը՝ տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով:

2016 թվականից մինչ օսր պաշտպանական համակարգում բարձր տեխնոլոգիական լուծումների ստեղծման, դրանց արդյունավետ կիրառման նպատակով Պաշտպանության նախարարությունը «Հայտեք» կիբերանվտանգության կենտրոնի հետ համատեղ հայտարավող մրցույթների շրջանակներում ներգրավում է զորակոչիկների՝ զինված ուժերի կարիքների համար տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների մասնագետների արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու ընտրության նպատակով:

Տեղեկատվական և կիբերանվտանգության ոլորտի զարգացման կարևորությունը Հայաստանում առավել արդիական դարձավ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո:

Կառավարության ծրագրի տվյալ առաջնահերթության վերաբերյալ դիտարկվող ժամանակահատվածում տեղեկություններ չեն հրապարակվել, սակայն կրկին հղում կատարելով Կազմակերպության՝ ՀՀ կառավարության հնգամյա (2021 - 2026 թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումներին ուղղված առաջնահերթությունների կատարման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ գրության պատասխանին, նշենք, որ հարցին, թե ինչ քայլեր են ձեռնարկվել տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության ոլորտի բարեփոխման և սույն խնդրի օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը պատասխանել է՝ «ԶՈՒ բարեփոխումների համատեքստում տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխումներն իրականացվում են համաձայն 2021-2026 թվականների ծրագրի»։

ՀՀ ՊՆ պատասխանում նշվում է նաև, որ «Մշակվել և ՀՀ պաշտպանության նախարարի 16.05.2024 թ. N 797 Լ հրամանով հաստատվել է «ՀՀ ՊՆ համակարգի գաղտնագրման ենթակատեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը»։ Պաշտպանական համակարգի տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտների կատարելագործման նպատակով վերանայվել են ՊՆ և ԶՈՒ ԳՇ ստորաբաժանումների կանոնադրային գործառույթները, պաշտպանական համակարգի տեղեկատվական քաղաքականության մոտեցումներն ու ըստ այդմ՝ իրականացվել համապատասխան փոփոխություններ»։

Դեռևս 2021 թ. ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հայկ Չոբանյանը հայտարարել էր[43], որ նախատեսվում է ստեղծել կիբերզորքեր և այդ ուղղությամբ արդեն առաջին քայլերն են իրականացվում և որ հետագայում համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության հետ հնարավոր կլինի հաջողությամբ կատարել նաև մյուս քայլերն այդ ուղղությամբ։

Մինչ այժմ, սակայն, հայտնի չէ, թե արդյոք ՀՀ-ում կիբերզորքերի ստեղծման ուղղությամբ այլ գործողություններ իրականացվել են, թե ոչ, չնայած գործընթացի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկությունները կարող են պաշտպանված լինել

43 https://www.azatutyun.am/a/31389827.html

որպես պետական գաղտնիք, այնուամենայնիվ դրանց ստեղծման փաստի մասին հանրությանը պետք է տեղեկացնել, քաղաքացիների հնարավոր մասնագիտական կողմնորոշմանն ու ներգրավմանը նպաստելու տեսանկյունից:

ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2024 թվականի փետրվարի 23-ին հրապարակված տեղեկանքում[44] անդրադարձ է կատարվում տեղեկատվական անվտանգության պահպանմանը, նշելով, որ հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում պարբերաբար իրականացվել են Տեղեկատվական անվտանգության թեմայով մեթոդագործնական պարապմունքներ, իսկ հանրային իրազեկման գործընթացի պատշաճ կազմակերպման և ճգնաժամային իրավիճակներում տեղեկատվական դաշտը կառավարելի դարձնելու նպատակով անցկացվել է «Փակ շղթա-2023» տեղեկատվական վարժանքը: Վարժանքի նպատակն էր՝ ճգնաժամային իրավիճակներում պաշտպանության նախարարության, ԶԼՄ-ների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՊՆ ՌՈ և ՆԳՆ ոստիկանության փոխգործակցության մակարդակի բարձրացումը, տեղեկատվական միասնական միջավայրի ստեղծումը և հանրային իրազեկման գործընթացի պատշաճ կազմակերպումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Կազմակերպության 2024 թ մայիսի հարցմանը պատասխանել էր, որ կիբերանվտանգության ոլորտային բարեփոխումներն իրականացվում են միջոցառումների պլանի ու ճանապարհային քարտեզի համաձայն, որոնք պարունակում են գաղտնի տեղեկատվություն, ուստի տրամադրման ենթակա չեն:

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության ոլորտի բարեփոխման ուղղությամբ իրականացված գործողությունների վերաբերյալ հրապարակված և հասանելի տեղեկությունները շատ սուղ են, ուստի ինչպես նախորդ տեղեկանքների հրապարակման պահին, այժմ ևս դժվար է պատկերացում կազմել, թե ինչ տեմպերով է զարգանում ոլորտը:

Առաջնահերթություն 8

44 https://www.gov.am/files/docs/5659.pdf

Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ ենթադրվում է իրականացնել ծրագրեր, որոնց նպատակն է «զարգացնել զինծառայողի և զինվորի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, ինչպես նաև բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը»:

Նախորդ տարի՝ 2023 թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը Կազմակերպությանը հայտնել էր, որ զինծառայողների հայրենասիրական դաստիարակությունը խթանելու, զինվորական ծառայության առաքելության գիտակցումն ապահովելու նպատակով կազմվել է «Հայրենիքի պաշտպանի ազգային գաղափարական դաստիարակության միջոցառումների ծրագիրը», որի շրջանակներում զորամասերի, ՏԻՄ-երի, ուսումնական հաստատությունների համագործակցությամբ իրականացվել են բազմաբովանդակ միջոցառումներ:

2024 թ. սույն առաջնահերթության ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ Կազմակերպության հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով ԶՈՒ ԳՇ ԲՀԱ վարչության կողմից մշակվել և գործողության են դրվել հետևյալ փաստաթղթերը՝

- ՀՀ ԶՈՒ բարոյահոգեբանական ապահովման հայեցակարգը
- ՀՀ ԶՈՒ ԲՀԱ բարոյահոգեբանական ապահովման ուղեցույցը (ՀՀ պաշտպանության նախարարի 2024 թվականի ապրիլի 19-ի N 647 հրաման)
- Նոր մոդելի արհեստավարժ սերժանտական կազմի պատվի կանոնները, զինծառայողների բարոյական արժեհամակարգի բնութագրիչները,

- Հաստատվել և ԶՈՒ զորամասեր է առաքվել 2023-2027 թթ. ՀՀ զինված ուժերում զինվորական կարգապահության ապահովման միջոցառումների պլան-ժամանակացույցը:

ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈՒ գլխավոր շտաբի պետի համապատասխան հրամաններով զորամասերի սպա-հոգեբանները լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերով վերապատրաստումներ են անցնում Մոսկվայի և ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարաններում, ՀՀ հոգեկան առողջության առաջատար կենտրոններում:

Դեռևս 2023 թ մարտի 13-ն ՀՀ Կառավարության նիստի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարը հայտարարեց, որ զորամասերին հատկացվել են հոգեբանական օգնության կետերի 23 լրակազմ նյութատեխնիկական միջոցներ[45]:

Չնայած սույն առաջնահերթությամբ սահմանված ԶՈՒ բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերի իրականացմանը, զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերություններն ու դրանց հետևանքով զինծառայողների մահվան դեպքերը վկայում են ԶՈՒ-ում սպա-հեգեբանների ինստիտուտը կատարելագործման ուղված գործուն քայլերի անհրաժեշտության մասին:

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի տվյալների 2023 թվականի ընթացքում ոչ կանոնադրական հարաբերությունների վերաբերյալ ստացվել է 12 զանգ, որոնցից՝

- 5-ը՝ ֆիզիկական բռնության դեպքով,
- 2-ը՝ շահագործման դեպքով,
- 2-ը՝ վիճաբանության,
- 3-ը՝ վիրավորանքի դեպքով:

Ոչ կանոնադրային փոխհարաբերությունների դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ ինչպես դեպքի հանգամանքները, այնպես էլ դրանց առաջացմանը նպաստող գործոնները, ծառայության կազմակերպման ու իրականացման գործընթացներում տեղ գտած թերություններն ու բացթողումները պարզելու համար:

45 https://www.1in.am/3242005.html

Նշված դեպքերից մեկով նախաձեռնվել է քրեական վարույթ, մեկ այլ դեպքի շրջանակներում իրականացված ծառայողական քննության արդյունքում խախտում կատարած զինծառայողին նշանակվել է «խիստ նկատողություն»: 2022 թ. համեմատ դեպքերը նվազել են 5-ով:

2024 թ. առաջին կիսամյակի ընթացքում, ըստ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի տվյալների[46], ոչ կանոնադրային հարաբերությունների վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությանում ստացվել է 2 ահազանգ, որոնցից մեկը վերաբերել է շահագործմանը, մյուսը՝ ֆիզիկական բռնությանը: Ըստ կենտրոնի՝ ֆիզիկական բռնության դեպքը չի հիմնավորվել, իսկ շահագործման դեպքի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ակնհայտ է, որ զինված ուժերում թե շահագործման և թե հատկապես ֆիզիկական բռնության բնույթի հանցագործությունները չեն սահմանափակվում մեկական դեպքերով, հաշվի առնելով զինված ուժերում զինծառայողների «սպանություն», «ինքնասպանություն» որակված մահվան դեպքերի, ինչպես նաև արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի առկայությունը:

Զինված ուժերում շարունակաբար տեղի ունեցող հանցագործությունները, ցավոք, փաստում են զինված ուժերում բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերի ոչ բավարար արդյունքների մասին: Թեև 2013 թվականից ՀՈՒ-ում ներդրվեց սպա-հոգեբանի ինստիտուտը, այնուամենայնիվ դրա արդյունավետության մասին դեռևս վաղ է խոսել. Արդյունավետության մասին պետք է վկայեն զինված ուժերում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայությունը, քրեական բարքերի իսպառ վերացումը, զինվորական ծառայության արժանապատիվ իրականացումը՝ հիմնված մարդու իրավունքների գերակայության սկզբունքի վրա:

Ինչ վերաբերում է զինված ուժերում տեղեկատվական, մշակութային ու ժամանցային միջոցառումների իրականացմանը կամ իրականացվող միջոցառումների բնույթի բարելավմանը, ապա այս պահին չկա որևէ տեղեկություն, որը թույլ կտա գնահատել նման միջոցառումների արդյունավետությունը, պաշտպանության նախարարությունը ևս որևէ կերպ չի անդրադարձել այս հարցին:

46 https://www.mil.am/files/2024/11.07.2024.pdf

Առաջնահերթություն 9

Զինվորական ծառայության գրավչության բարձրացում՝ աշխատավարձային և սոցիալական երաշխիքների նոր քաղաքականության միջոցով

Սույն առաջնահերթության վերաբերյալ Կառավարության հնգամյա ծրագրում նշվում է, որ «զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը մշտապես եղել և լինելու է Կառավարության ուշադրության կենտրոնում»: Այդ նպատակով նախատեսվում է «մեծացնել զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործել զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները»: Կառավարության հնգամյա ծրագրի սույն կետում նաև նշվում է, որ նոր թափ են ստանալու «զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ Կառավարության հնգամյա ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը»:

Բանակ-հասարակություն կապն առավել ամրապնդելուն, զինվորական ծառայության գրավչությունը բարձրացնելուն միտված տարաբնույթ միջոցառումների շրջանակում Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի կուրսանտները պարբերաբար այցելում են տարբեր կրթօջախներ տեղում աշակերտներին ներկայացնելով ռազմական ակադեմիայի տված կրթության առավելությունների և հնարավորությունների մասին:

2023 թվականին ՀՀ ՊՆ-ի հաղորդմամբ զինվորական ծառայության և ավագ դպրոցներում ռազմական կրթության գրավչության խթանման նպատակով միջազգային գործընկեների հետ համագործակցությամբ տպագրվել են «Զինվորական ծառայության» և «Ռազմական կրթության գրավչության բարձրացման» թեմաներով տեղեկատվական պաստառներ, որոնք փոխանցվել են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի նախարարությանը՝ ավագ դպրոցներում տարածելու նպատակով:

Ինչ վերաբերում է զինծառայողների բնակարանային ապահովմանը, ապա հիփոթեքային վարկավորման ծրագրի հասանելիությունն ու շարունակականությունն ապահովելու և ծրագրից օգտվելու առումով առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 1167-Ն որոշմամբ սահմանվեցին նոր դրույթներ: Ըստ կառավարության 1091-Ն որոշման՝ ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի կարող է շահառու հանդիսանալ և պետական աջակցություն ստանալ ծրագրին մասնակցելու հավանականություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 500 զինծառայող, իսկ նոր որոշմամբ սահմանվում է, որ 2022 թվականին ծրագրի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման N 2 հավելվածի 5-րդ կետում նշված ժամկետում դիմում-հայտ ներկայացրած և ծրագրի մասնակիցների ռեեստրում գրանցված բոլոր զինծառայողները»:

Տվյալ տարվա վարկավորման ծրագրի շրջանակում հիփոթեքային վարկի տրամադրման պատրաստակամության մասին համագործակցող վարկատու կազմակերպության կողմից տրված տեղեկանքի հիման վրա ծրագրից օգտվելու առաջնահերթությունից օգտվում են օրենքով սահմանված կարգով բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառման վերցված զինծառայողները, արդեն սույն որոշմամբ նաև ռազմաուսումնական հաստատություն ավարտելուց հետո 5 տարվա ընթացքում դիմում-հայտ ներկայացրած սպայական կազմի զինծառայողները, իսկ վիճակահանությունը կազմակերպվում է միայն ծրագրում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք ունեցող զինծառայողների միջև[47]:

Ըստ բնակարանային ապահովման նոր ծրագրի՝ *2022 թվականի հուլիսի 1-ից հետո ռազմաուսումնական հաստատություններ ընդունված, այն ավարտած և սպայական ծառայության անցած զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով կհատկացվեն բնակարաններ: Ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՀՀ*

47 https://www.e-gov.am/gov-decrees/item/38746/

ՊՆ համակարգում, կամ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով կհատկացվի բնակարան՝ նրա հետ կնքելով անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: Սահմանված ժամկետով կնքված պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի ժամկետը լրանալու կամ մինչև պայմանագրի ժամկետը լրանալն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու և օրենքով սահմանված կարգով հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքերում հատկացված բնակարանը զինծառայողին տրամադրվում է անհատույց սեփականության իրավունքով:

Օրենքով սահմանված այլ հիմքերով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքերում անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը համարվում է լուծված և հատկացված բնակարանի նկատմամբ դադարում է զինծառայողի անհատույց օգտագործման իրավունքը:

Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում զինծառայողի՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհվելու (մահանալու) դեպքում, զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացված բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրվում է զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին:

Ծրագիրը ենթադրում է զինծառայողներին անհատույց օգտագործման, իսկ համապատասխան պայմանների դեպքում՝ նաև սեփականության իրավունքով Երևան քաղաքում 3 սենյականոց (մինչև 90 ք.մ.) բնակարանի հատկացում՝ ՀՀ ՊՆ կողմից պատրաստի բնակարանների ձեռքբերման միջոցով[48]:

2023 թվականի մայիսի 18-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ՀՀ Պաշտպանության նախարարությունը քննարկման դրեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության

48 https://www.mil.am/hy/pages/42

որոշման նախագիծը[49], որով հստակեցվում է մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում օրենքով սահմանված բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր հաշվառված անձանց բնակարանային ապահովության գործընթացը, 6 անձից ավելի ընտանիքի անդամներ ունեցող շահառուների համար սահմանվում են բնակարանային ապահովության նոր պայմաններ:

2023 թվականի ապրիլի 13-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-126-Ն օրենքի ընդունմամբ ծառայողական բնակարանով չապահովված պայմանագրակին զինծառայողներին այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց վճարվող դրամական փոխհատուցումը փոխարինվել է ամսական դրամական հատուցմամբ:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակ կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունեցող ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներն՝ անկախ զինվորական կենսաթոշակի իրավունք ունենալու հանգամանքից, ձեռք են բերել ամենամսյա պարգևավճար ստանալու իրավունք (5000 դրամ):

2024 թվականի փետրվարին 27-ին հրապարակված տեղեկանքի համաձայն՝ «Մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկավորման միջոցով բնակարան կամ բնակելի տուն է ձեռք բերել 541 զինծառայող: 78 շահառուի հատկացվել է բնակարանի գնման վկայագիր, որոնցից 40 զինծառայող արդեն ձեռք է բերել բնակարան կամ բնակելի տուն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության արդյունքում «ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության

49 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ - e-draft.am

2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1539-Ն որոշմամբ սահմանվել են կարգավորիչ ինչպես նաև բարելավող մի շարք դրույթներ[50], համաձայն որոնց՝

- զոհված երկու զինծառայողի (երկու ծնողի, երկու զավակի, ամուսնու և զավակի, ծնողի և զավակի ծնողի և ամուսնու) դեպքում՝ ամսական պարգևավճարի չափը կազմում է յուրաքանչյուր երեխային՝ 76 000 դրամ, իսկ յուրաքանչյուր այլ անդամ՝ 62 000 դրամ,
- սահմանվել են մարտական գործողությունների ժամանակ կամ այլ պետություններում մարտական գործողությունների (խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների ժամանակ) ձևավորմամբ 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին և կամավորագրված անձանց ամենամյա պարգևավճարի նշանակման հետ կապված կարգավորումներ, ինչը նախկինում սահմանված չի եղել,
- սահմանվել են դրույթներ, ըստ որի՝ զոհված ընտանիքին նշանակված պարգևավճարի բաժնեմաս ստանալու իրավունք ունեցող անձի մահվան դեպքում նախատեսված վերահաշվարկից բացի ընտանիքի մյուս անդամի դիմումի հիման վրա պարգևավճարի վերահաշվարկ կկատարվի նաև պարգևավճար ստանալու իրավունքի դադարեցման համար հիմք հանդիսացող ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1179-Լ որոշմամբ[51] հաստատվել է 2016 և 2020 թվականներին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝ վերոնշյալ անձանց աջակցել ձեռք բերել գործատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ և կարողություններ՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու համար: Ծրագրի իրականացումն ապահովվում է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջոցով: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից՝ շահառուն հնարավորություն կունենա անցնել մասնագիտական ուսուցում՝ մինչև 5 ամիս

50 https://www.e-gov.am/gov-decrees/item/39113/

51 https://www.arlis.am/documentview.aspx?docID=166654

տևողությամբ՝ գործատուի մոտ կամ վերջինիս կողմից ընտրված ուսումնական հաստատությունում կամ Միասնական սոցիալական ծառայության կողմից առաջարկվող ուսումնական հաստատությունում, գործատուի մոտ աշխատանքային փորձառության կազմակերպում՝ 3 ամիս տևողությամբ, շահառուի հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում՝ միանվագ փոխհատուցման տրամադրում գործատուին։

Առաջին բաղադրիչի շրջանակում շահառուն հնարավորություն կունենա անցնել մասնագիտական ուսուցում՝ մինչև 5 ամիս տևողությամբ։ Ուսուցման ամբողջ ժամանակահատվածում շահառուին կտրամադրվի ուսման վարձի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50,000 դրամի չափով, բացի այդ կտրամադրվի նաև կրթաթոշակ՝ նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ի չափով։ Մասնագիտական ուսուցման դասընթացի ավարտական վկայականն ստանալուց հետո շահառուի հետ մեկ տարի ժամկետով կկնքվի աշխատանքային պայմանագիր, որի շրջանակում գործատուին կտրամադրվի ամսական առավելագույնը 50,000 դրամ՝ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու համար։

Երկրորդ բաղադրիչի շրջանակում պատերազմին մասնակցած քաղաքացին հնարավորություն կունենա գործատուի մոտ աշխատանքային փորձառության անցնել՝ 3 ամիս տևողությամբ։ Այդ նպատակով կտրամադրվի փոխհատուցում՝ շահառուի աշխատավարձի վճարման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով՝ ամսական կտրվածքով, 3 ամիս ժամկետով, շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու համար՝ երեք ամիս ժամկետով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 25,000 դրամի չափով և ինն ամիս ժամկետով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50,000 դրամի չափով։

Երրորդ բաղադրիչի շրջանակում, շահառուի հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, գործատուին կտրամադրվի 300,000 դրամի չափով միանվագ փոխհատուցում (գործատուի ցանկությամբ՝ կամ աշխատանքային հարաբերությունների սկզբից կամ 12 ամիսը լրանալուց հետո), եթե

վերջինս առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքի 2016 և 2020 թթ.պատերազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց հետ:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի հիման վրա 2017 թվականից գործող Զինապահ հիմնադրամը (նախկինում՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ) հատուցումներ է տրամադրում 2020 թվականին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետո՝

- 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին,
- զոհված կամ դատական ակտով անհայտ բացակայող ճանաչված յուրաքանչյուր զինծառայողի ընտանիքի շահառուներին:

Հիմնադրամը հատուցումներ է տրամադրում նաև 2008-2016 թթ. հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կամ զոհվածների ընտանիքներին՝ տրամադրելով միայն ամսական փոխհատուցումներ: Որոշման գործողության ժամկետը պարբերաբար երկարաձգվում է անհայտ կորած այն զինծառայողների հարազատների համար, ովքեր մինչ օրս չեն դիմել դատարան՝ իրենց անհայտ կորած զինծառայողին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու համար:

2017-2023 թթ. հիմնադրամը հատուցում է տրամադրել 5199 շահառուի: Միայն 2022 թ. շահառու է դարձել 411 զինծառայող, իսկ 2023 թվականին՝ 109 շահառու[52]:

Որպես զինվորական ծառայության գրավչության բարձրացման միջոց ներդրվեց նաև զինծառայողների ատեստավորման համակարգը: Հիշեցնենք, որ 2022 թ. դեկտեմբերի 7-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը հաստատվեց և ուժի մեջ մտավ նույն թվականի դեկտեմբերի 23-ին[53]: 2023 թ. փետրվարի 9-ի կառավարության նիստի ժամանակ ՀՀ կառավարությունը հաստատեց «Բանակում մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային

52 https://www.zinapah.am/hy/tnoreni-hashvetvutyun

53 https://www.arlis.am/documentview.aspx?docid=172096

կազմերի զինծառայողների որակավորման կարգը», որի արդյունքներով հաշվարկվում են նաև զինծառայողներին տրվող հավելավճարների չափերը։ 2023 թ. հունիսի 5-ին մեկնարկեց զինծառայողների ատեստավորման գործընթացը։

Կամավոր ատեստավորման համակարգը ենթադրում է սպայական աշխատակազմի աշխատավարձի բարձրացում այն դեպքում, երբ ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճաններից, մասնագիտական գիտելիքների ու ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից զինծառայողն ստանում է «բավարար» կամ «լավ» կամ «գերազանց» գնահատական։ Ըստ այդմ՝ սպայական կազմի հավելավճարի չափը «գերազանց»-ի դեպքում սահմանվում է 470 000 ՀՀ դրամ, «լավ»-ի դեպքում՝ 420 000 ՀՀ դրամ, «բավարար»-ի դեպքում՝ 230 000 ՀՀ դրամ, մյուս կազմերի դեպքում «գերազանց»՝ 395 000 ՀՀ դրամ, «լավ»՝ 345 000 ՀՀ դրամ, «բավարար»՝ 205 000 ՀՀ դրամ։

Ինչպես կառավարության հնգամյա ծրագրի մեկնարկի սկզբնական շրջանում, այնպես էլ այժմ ՀՀ Զինված ուժերում զինվորական ծառայության գրավչության բարձրացման համար որպես առաջնային գործիք դիտարկվում է զինծառայողների ֆինանսական ապահովումը։ Այս առնչությամբ Կազմակերպության նախորդ տեղեկանքներում արձանագրած խնդիրներն արդիական են նաև այժմ, մասնավորապես՝ որքան էլ կարևոր լինի ֆինանսական ապահովությունը, առանց մասնագիտական, իրավունքահեն մոտեցման դժվար կլինի դրական արդյունք ակնկալել։ Զինվորական ծառայության ընթացքում մարդկային արժանապատվության նկատմամբ բովանդակային հարգանքի, պաշտոնական առաջխաղաղացման, մասնագիտական կարողությունների պատշաճ զարգացմանը զուգահեռ սոցիալական, առողջապահական երաշխիքների համալիր ապահովումը, հանրության կողմից զինծառայողի նկատմամբ հարգանքի ձևավորումը կարող է երաշխավորել զինվորական ծառայության գրավչությունը։ Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն կարևոր խնդիրը, որ զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինծառայողները շատ դժվար են ինտեգրվում աշխատանքային շուկային, ուստի պաշտպանության նախարարությունը պիտի գնահատի նաև այն ռիսկը, որ շատերը չեն ցանկանա ծառայության անցնել զինված ուժերում նաև այն

պատճառով, որ դեռևս աշխատունակ տարիքում կարող են բախվել աշխատանքի շուկա մուտք գործելու դժվարություններին:

Առաջնահերթություն 10

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործում, զինված ուժերի կարգապահության խթանում, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ, բացի Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործումից, զինված ուժերի կարգապահության խթանումից և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունից, նախատեսվում է նաև առավելագույն ջանքերի գործադրում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերը բացառելու ուղղությամբ:

2021-2026 թթ. ՀՀ Կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2024 թվականի փետրվարին 27-ին հրապարակված տեղեկանքի համաձայն զինված ուժերում կարգապահության և մարդու իրավունքների պաշտպանության խթանման շրջանակներում 2023 թվականին Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի սպաների որակավորման բարձրացման կենտրոնի կրթական 32 ծրագրերում ներդրվել է «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում» առարկան (պիլոտային ծրագրով)[54]:

Դեռևս 2015 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվեց մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը, որի նպատակն է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում մարդու իրավունքների և բարեվարքության (այդ թվում նաև՝ հակակոռուպցիոն գործունեության) ամրապնդման ապահովումը: Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կազմում գործում է թեժ գծի ծառայությունը, որի հրապարակած տվյալներով ոչ կանոնադրային

54 https://www.gov.am/files/docs/5659.pdf

հարաբերությունների վերաբերյալ 2021 թվականի ընթացքում ստացվել է 46 ահազանգ[55], որից՝

- ծեծի դեպքեր՝ 16
- շահագործում՝ 7
- վիճաբանության դեպքեր՝ 4
- վիրավորանք՝ 8
- այլ՝ 11

2022 թվականի ընթացքում ստացվել է 16 ահազանգ[56], որից

- ծեծի դեպքեր՝ 8
- շահագործում՝ 2
- վիճաբանության դեպքեր՝ 2
- վիրավորանք՝ 4

2023 թվականի ընթացքում ստացվել է 12 ահազանգ[57], որից

- ֆիզիկական բռնության դեպք՝ 5
- շահագործման դեպք՝ 2
- վիճաբանության դեպք՝ 2
- վիրավորանքի դեպք՝ 3

2021 թվականի համեմատ 2022 թ. ստացված ահազանգերը նվազել են նվազել է 65 %-ով, իսկ 2023 թվականի դեպքերը 2022-ի համեմատ նվազել են 25 %-ով:

Նշենք նաև, որ ըստ Պաշտպանության նախարարության տվյալների, 2023 թվականին ՀՀ ՊՆ Թեժ գծով ստացվել է 92 գանգատ, որոնց 48 %-ը եղել է գանգատ զորամասերից: Սա ևս փաստում է, որ զինծառայության ընթացքում զինծառայողների իրավունքները խախտվում են:

Հայաստան-Եվրոպայի խորհուրդ համագործակցության շրջանակներում 2023 թվականի ապրիլի 21-ին տեղի ունեցավ Հայաստան-ԵԽ համագործակցության 2023-2026

55 https://shorturl.at/OCvHr

56 https://shorturl.at/KqGAF

57 https://shorturl.at/Qhabi

թթ. գործողությունների ծրագրի՝ Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների խթանմանն առնչվող ենթածրագրի բացման միջոցառումը: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել զինծառայողների մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանությանը և զինված ուժերում կանանց դերի ամրապնդմանը՝ բարելավելով կարգավորման շրջանակը և ինստիտուցիոնալ մեխանիզմները, ուժեղացնելով սոցիալական երաշխիքները, հզորացնելով Պաշտպանության նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, զինվորական ոլորտի իրավապահ մարմինների և դատարանների կարողությունները: Ծրագիրը նաև նպատակ ունի աջակցել Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանության **2020-2025 թվականների ազգային ռազմավարության առաջնահերթությունների իրականացմանը**:

Ծրագրի ակնկալվող **նպատակներն են՝**

- Աջակցել Պաշտպանության նախարարությանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, դատական և իրավապահ մարմիններին, ինչպես նաև այլ իրավասու պետական մարմիններին մարդու իրավունքների եվրոպական չափանիշների վերաբերյալ փորձագիտական կարծիք տրամադրելով՝ վերանայելու համապատասխան քաղաքականությունները, իրավական և կարգավորող շրջանակները:
- Զարգացնել զինված ուժերի անձնակազմի, իրավապահ և դատական մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գիտելիքներն ու հմտությունները՝ բանակում մարդու իրավունքների խախտումներին առնչվող խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար՝ իրենց համապատասխան գործառույթներում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման միջոցով:
- Նպաստել համապատասխան մարմինների մասնագիտական և գործառնական կարողությունների զարգացմանը, որոնք պատասխանատու են բանակում կին զինծառայողների մասնակցության խթանման ապահովման համար:
- Աջակցել հիմնական շահագրգիռ կողմերի՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների ներդրմանը և կիրառմանը՝ ԵԽ չափանիշներին համապատասխան[58]:

58 https://www.coe.int/hy/web/yerevan/-/high-level-launching-of-the-council-of-europe-project-fostering-human-rights-in-the-armed-forces-in-armenia-1

2024 թվականի հունիսի 21-ին «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում մեկնարկեց «Մարդու իրավունքները զինված ուժերում» ՀԵԼՓ մոդելային դասընթացի հայկական տեղայնացումը: Դասընթացը զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ համընդգրկուն աղբյուր է, որը ներառում է Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային-իրավական չափանիշները և լավագույն փորձը ոլորտում: Հայկական տարբերակը ներառում է ներպետական իրավական կարգավորումներ, դատական նախադեպեր և պրակտիկա՝ այդպիսով առավել համապատասխանեցնելով դասընթացը հայ մասնագետների համար:

2023 թ. նոյեմբերին ԵԱՀԿ աջակցությամբ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին կից անվտանգության խորհրդի հետ համատեղ ստեղծվեց Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակ[59]:

Հարթակի քննարկումներին մասնակցել են Հայաստանի ուժային կառույցների ներկայացուցիչներ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, փորձագետներ ԵԱՀԿ-ից, քաղհասարակության ներկայացուցիչներ: Հարթակի գործունեությունը միտված է անվտանգության ոլորտի բարեփոխումներին, ԱԺ-Կառավարություն - քաղհասարակություն փոխգործակցությանն ու խորհրդարանական վերահսկողության գործիքակազմերի ուժեղացմանը: Ըստ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի՝ հարթակի շրջանակներում կազամակերպվել են քննարկումների ոստիկանական համակարգի, զինված ուժերի բարեփոխումների, տեղեկատվական անվտանգությանը վերաբերող, ինչպես նաև ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ձևավորմանն ուղղված քայլեր վերաբերյալ հարցեր[60]: Վերջին հարցը, ըստ Ա. Քոչարյանի, քննարկվել է ՄԻՊ ռամավարության գործունեության տիրույթում:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողությանն անդրադառնալիս անհրաժեշտ է ընդգծել ռազմական

---

59 https://www.1lurer.am/hy/2023/11/05/7/1025257

60 https://www.youtube.com/watch?time_continue=183&v=PjMQ8Oq-mP0&embeds_referring_euri=https%3A%2F%2Fwww.1lurer.am%2F&source_ve_path=MzY4NDIsMzY4NDIsMjg2NjIsMzY4NDIsMzY4NDIsMjg2NjMsMjg2NjMsMjg2NjY
https://ombuds.am/am/site/ViewNews/2754

հրամանատարական կազմից անկախ ինստիտուտի՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ձևավորման կարևորությունը, որն աջակցում է լավ կառավարման (good governance) սկզբունքների կիրառության երաշխավորմանն ու պահպանմանը:

«Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման առնչությամբ Կազմակերպությունը ներկայացրել է 2 հաղորդում, որոնցում Կազմակերպությունն անդրադարձել է ՀՀ զինված ուժերում կյանքի իրավունքի և վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի շարունակվող խախտումներին, մատնանշել է դրանց պատճառները, նպաստող պայմանները, ինչպես նաև առաջարկել է ՀՀ իշխանություններին և ԵԽ Նախարարների կոմիտեին ուշադրություն դարձնել, ի թիվս այլնի, սպա-հոգեբանների ինստիտուտի կայացմանը և զարգացմանը, ինչպես նաև պաշտպանական ոլորտում ժողովրդավարական վերահսկողության ապահովման համար՝ ռազմական օմբուդսմենի գրասենյակի ներդնմանը:

Կազմակերպության հաղորդումներով ներկայացված մտահոգությունները և խնդիրներն իրենց արտացլումն են գտել 07.12.2023թ. ԵԽ Նախարարների կոմիտեի որոշման մեջ, որտեղ, ի թիվս այլնի, ընդհանուր միջոցառումների մասով Կոմիտեն առաջարկել է ՀՀ իշխանություններին կատարել հետևյալ գործողությունները՝

- տրամադրել վիճակագրական տվյալներ վերջին հինգ տարիներին զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի քննության մասին:
- հնարավորինս արագ զարգացնել զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումների մեխանիզմի ստեղծումը և այդ մասին տեղեկացնել Կոմիտեին: Զեկուցել Կոմիտեին Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի համապատասխան գործողությունների կատարման վերաբերյալ:
- տեղեկատվություն տրամադրել զինծառայողների նկատմամբ ոտնձգությունների, ինչպես նաև զինվորական ղեկավարության կողմից նրանց նկատմամբ բռնության ենթարկելու և վատ վերաբերմունքի կանխարգելման նպատակային միջոցառումների մասին:

- քանի որ արդեն իսկ նախապատրաստվում է ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելման ռազմավարության նախագիծը, Կոմիտեին տեղեկացնել ռազմավարությամբ նախատեսված գործողությունների, ընդունման ժամկետների և հետագա իրականացման համար նախատեսված քայլերի մասին, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն զինծառայողներին պատշաճ հոգեբանական գնահատում և աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին։
- տեղեկատվություն տրամադրել առողջական լուրջ խնդիրներով անձանց զինվորական ծառայության զորակոչելը բացառելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին։

Կոմիտեն որոշել է վերսկսել գործերի քննարկումը ամենաուշը 2025 թվականին Կոմիտեի DH նիստերից մեկում։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտպանական ոլորտը համարվում է «փակ համակարգ», որտեղ մարդու իրավունքները ենթարկվում են որոշակի սահմանափակումների, իսկ համակարգի շուրջ իրավահարաբերությունները պարունակում են գաղտնիություն, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ: Ռազմական Օմբուդսմենի ինստիտուտը առաջադեմ երկրներում կարևորագույն օղակ է հանդիսանում քաղաքացիական վերահսկողության համակարգում, որի նպատակն է նպաստել պաշտպանության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը, իսկ զարգացող և բարեփոխումներ իրականացնող երկրներում, որտեղ առկա է դատական համակարգի ինստիտուցիոնալ թուլություն և այլ հակակշիռ ստանդարտ մեխանիզմների բացակայություն (օրինակ՝ վեճերի լուծման այլընտրանքային արտադատական մարմիններ) կամ ոչ պատշաճ վարչարարություն, ռազմական օմբուդսմենի ինստիտուտը հանդիսանում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմ և երաշխիք: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն (այժմ՝ Մարդու իրավունքների խորհուրդ) ընդունել է 2006\64 բանաձևը, որում սահմանվում է լավ կառավարման հիմնական հատկանիշները՝

- հաշվետվողականություն,

- թափանցիկություն,
- պատասխանատվություն,
- մասնակցություն,
- արագ արձագանքելու կարողություն (մարդկանց կարիքներին)[61]:

Դեռևս 2016 թ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ իր գնահատականում շեշտել էր ռազմական օմբուդսմենի ստեղծման անհրաժեշտությունը: Այսօր էլ այս առաջարկը շարունակում է մնալ արդիական, իսկ զինված ուժերում իրավունքների պաշտպանության խնդիրները մինչ օրս կրում են համակարգային բնույթ:

Հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը որդեգրել է մոտեցում, որի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների զարգացումը պետք է ուղեկցվի մասնագիտացված օմբուդսմենների ձևավորմամբ: 2020 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է ուսումնասիրություն [62] ռազմական օմբուդսմենի ինստիտուցիոնալ կառույցի արդյունավետության վերաբերյալ, որում անդրադարձել է առկա խնդիրներին, ՀՀ-ում ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ձևավորման նախընտրելի ձևին:

Ամփոփելով սույն առաջնահերթության կատարմանն ուղղված գործողությունները կարող ենք ընդգծել, որ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող բաղադրիչի կատարումը փորձ է արվում ապահովել Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակներում: Գործնականում, սակայն, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների թվում պետք է լինի բոլոր խախտումների վերաբերյալ զինծառայողների կողմից ահազանգելու խթանումը, որին պետք է հետևի բոլոր ահազանգերի պատշաճ քննության իրականացումն ու դրանց

61 Տե՛ս նաև https://www.ohchr.org/en/good-governance

62 https://hcav.am/ombudsman-military-2020/

արդյունավետ լուծման արձանագրումը, որը կհանգեցնի հետագայում նման խախտումների նվազմանը:

Բացի այդ, անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողությանն ուղղված կարևորագույն քայլերից մեկի՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ձևավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավականին դանդաղ են և դեռևս բավարար չեն մոտ ապագայում նման կառույցի հեռանկարը իրատեսական համարելու համար:

Առաջնահերթություն 11

Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում

2024 թվականի մայիսին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը հրապարակեց «նոր կառուցված զորամասի» նկարներ, որոնք կառուցվել են քարի փոխարեն դիֆտից՝ սենդվիչ-պանելների միջոցով: Խնդիրն այն է, որ պատերազմական իրավիճակում զորամասերը առաջինն են թիրախավորվում և հետևաբար դրանք ամուր և պաշտպանված պիտի լինեն, մինչդեռ դիֆտից պատրաստված զորամասերն ավելի խոցելի են, քան քարե շինությունները: Այս համատեքստում անհրաժեշտ է հիշել 2023 թվականին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում բռնկված հրդեհը, ինչի հետևանքով մահացան 15 ժամկետային զինծառայողներ: Ըստ պաշտպանության նախարարության խոսնակի՝ կացարանը, որտեղ տեղակայված էին զինծառայողները, ժամանակավոր էր[63]: Միջադեպից հետո բազմաթիվ զինվորական պաշտոնյաներ ազատվեցին զբաղեցրած պաշտոններից, սակայն զինծառայողների կեցության, ծառայության վայրի կենցաղավարման տարրական պայմանների՝ ջեռուցման, ջրամատակարարման, հրդեհային կանոնների և անվտանգության պահպանման ապահովումը խորքային քննարկման առարկա այդպես էլ չդարձավ:

63 https://armeniasputnik.am/20230120/zintsarajvoghnery-kacaranum-zhamanakavvor-ein-teghakajvel-hh-pn-54071927.html

2024 թ. մայիսին Կազմակերպության տեղեկատվության հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությանը հայտնել է, որ ՀՀ-ում ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների շարքին են դասվում պետության և ԶՈՒ ղեկավարման օբյեկտները, ատոմակայանը, ռազմավարական նշանակության սպառազինությամբ զինված զորամասերի մշտական տեղակայման վայրերը, ռազմաարդյունաբերության կետերը, միայն նշելով, որ «հարցի կատարումը ԶՈՒ մասով ներառված է ԶՈՒ կիրառման պլանում», առանց մասնավորեցնելու Ռազմավարական ռնշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված ՀՀ ՊՆ քայլերը:

Ինչպես խախորդ տեղեկանքներումմ ենք արձանագրել՝ ***ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացումը չափազանց կարևոր է հատկապես պատերազմի վերսկսման վտանգի մեջ գտնվող պետության համար:***

Ուստի հնարավորինս սեղմ ժամկետներում հարկավոր է ապահովել նման օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության բարձրացումը:

Կանայք ՀՀ զինված ուժերում

ՀՀ կառավարության 2021 – 2026 թթ. ծրագրով նախատեսվում է նաև զինված ուժերում կանանց ներգրավվածությունը շարունակաբար աճի ապահովում:

Հիշեցնենք, որ 2013 թ.-ից ՀՀ–ում կանանց հնարավորություն է ընձեռվել սովորել ՀՀ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: Իսկ 2020 թ.-ից կանանց ընդունելություն սկսեց իրականացնել նաև Մոնթե Մելքոնյան անվան ռազմամարզական վարժարանը: 2021 թ. Կառավարության հնգամյա ծրագիրը ՀՀ ԱԺ-ում ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ «կանանց ներգրավվածության մասին թեզը չունի որևէ գաղափախոսական կամ հակագաղափարախոսական հենք, այլ պայմանավորված է բացառապես պրագմատիկ հաշվարկով. կանայք Հայաստանի բնակչության մեծամասնությունն են, նրանց ռեսուրսի թերներգրավվածությունը որևէ ոլորտում նշանակում է մեր երկրի զարգացման պոտենցիալի աղճատում»: Ըստ վարչապետի՝

ասվածը չի նշանակում, թե կանայք զինված ուժերում պետք է նույնքան ներգրավված լինեն, որքան տղամարդիկ» Խոսքը, ըստ վարչապետի, պոտենցիալի հնարավորինս լիարժեք օգտագործման մասին է, որը դեռ պետք է բացահայտվի։

ՀՀ Կառավարության ծրագրի 2023 թ. կատարման վերաբերյալ տարեկան զեկույցում չի նշվում, թե զինված ուժերում կանանց ներգրավման ուղղությամբ ինչ քայլեր են իրականացվել։ Անդրադարձ է կատարվել միայն կանանց կամավոր պարտադիր զինվորական ծառայության անցնելու հնարավորությանը։

2023-ի փետրվարին շրջանառվեց, իսկ ապրիլին ընդունվեց կամավոր հիմունքներով կանանց 6–ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ներգրավելու մասին օրենքը։

Օրենքը հնարավորություն է տալիս, որ կանայք կամավորության հիմունքներով 6-ամսյա ժամկետային զինծառայություն անցնեն, որից հետո կարող են «Պաշտպան հայրենյաց» ծրագրի տրամաբանությամբ անցնել պայմանագրային զինվորական ծառայության անցնել 5 տարի ժամկետով[64]։

ՀՀ վարչապետը կառավարության նիստի ժամանակ նշեց՝ խնդիր են դրել, որ կանանց համար հնարավորինս նոր կամ շատ թարմ ենթակառուցվածքներ լինեն, քանի որ նոր էջ է, և պետք է նոր բովանդակությամբ և թարմությամբ այդ գործընթացը սկսել։ Պաշտպանության նախարարությունը միաժամանակ հատնում է կին զինծառայողների զինվորական պատրաստության երկու փուլի մասին.

1-ին փուլում 25 օրվա ընթացքում անցկացվում են նորակոչիկների նախնական զինվորական պատրաստության պարապմունքներ, որից հետո կին զինծառայողներն ընդունում են զինվորական երդում, 2-րդ փուլում, զինծառայողների մտավոր, ֆիզիկական պատրաստության որակների և առողջական սահմանափակումների գնահատման հիման վրա, նախատեսվում է մասնագետների ընտրություն, զինծառայողները նշանակվում են համապատասխան հաստիքների, որից հետո, համաձայն պատրաստության ծրագրի, իրականացվում են պարապմունքներ։ Պաշտպանության նախարարությունը շարունակում է տարբեր տեղեկատվական արշավներ կազմակերպել կամավոր պարտադիր զինվորական ծառայության նկատմամբ

64 https://www.youtube.com/watch?v=be-rGgq1cm8

կանանց հետաքրքրվածությունը բարձրացնելու համար[65]: ՊՆ կին զինծառայողների մոտ զինվորկան ծառայության նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու տարբերակ է նաև զինծառայողների ատեստավորումը, որի մասին ներկայացվել է սույն տեղեկանքի «Առաջնահերթություն 1»–ում:

Այսպիսով, եթե Ծրագրի առաջին տարվա կատարողականի ուսումնասիրության արդյունքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2022 թ. արձանագրել էր, որ դեռևս հայտնի չէին այն նոր մոտեցումները, որով Կառավարությունը նախատեսում է ապահովել կանանց առավել մեծ ծավալով ներգրավումը զինված ստորաբաժանումներում, ապա ներկայումս գործում են մի շարք մեխանիզմներ՝ կանանց զինվորական ծառայության ներգրավելու ուղղությամբ:

2023 թ. Կազմակրպությունն իրականացրեց զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների պաշտպանության վիճակի ուսումնասիրություն՝ զինծառայողների շրջանում իրականացված հարցումների միջոցով, որն ուղեկցվեց զինված ուժերում կանանց ներգրավվածության և նրանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների միջազգային պրակտիկայի, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի թիվ 1325 բանաձևի հիման վրա կազմված ՀՀ 2022 – 2024 թթ. գործողությունների ազգային ծրագրի որոշ բաղադրիչների կատարման հետազոտությամբ:

Հետազոտության արդյունքում կազմվեց «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը[66], որի ներկայացմանը ներկա են գտնվել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, տարբեր դեսպանությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հետազոտությամբ Կազմակերպությունը վերհանեց կանանց զինվորական ծառայության ներգրավման հետ կապված խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ ձևակերպված առաջարկությունները ներկայացվել են ՀՀ

65 https://www.youtube.com/watch?v=KJI22_2QJOA
https://www.youtube.com/watch?v=oQ_eE7n9egg
https://www.youtube.com/watch?v=aYnklX_V1B4

66 https://hcav.am/wp-content/uploads/2024/03/%D4%B6%D4%B5%D4%BF%D5%88%D5%92%D5%85%D5%91-%D4%BF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B6%D6%81-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A8-%D5%80%D5%80-%D4%B6%D5%88%D6%82-%D5%B8%D6%82%D5%B4-ARM.pdf

պաշտպանության նախարարությանը՝ քննության առնելու և արձանագրված խնդիրների լուծման ուղղությամ քայլեր ձեռնարկելու առաջարկով: Առաջարկությունների մեծ մասը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընդունվեց ի գիտություն, և այժմ Կազմակերպությունը հետամուտ է ներկայացված առաջարկությունների ընդունմանը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

Կոռուպցիոն ռիսկերը ՀՀ զինված ուժերում

Զինված ուժերի բարեփոխումների ուղղությամբ կատարված քայլերի թվում չափազանց մեծ կարևորություն ունի զինված ուժերում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարն ու կոռուպցիայի բացառումը:

Զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Կազմակերպության կողմից 2021 թ. հրապարակված տեղեկանքում արձանագրել ենք, որ տարիներ շարունակ զինված ուժերում տարածված կոռուպցիոն ռիսկերը դեռևս չեն հաղթահարվել, չեն ստեղծվել հատկապես պաշտպանության բնագավառի պետական գնումների նկատմամբ պատշաճ վերահսկողության, շահերի բախումը կանխող մեխանիզմներ:

Անդրադառնալով ՀՀ զինված ուժերում կոռուպցիան ռիսկերին ներկայումս, նշենք, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի և ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորությամբ զինվորական դատախազության 2023 թվականի աշխատանքների ամփափման 2024 թվականի փետրվարի 27-ին հանդիպման ընթացքում ՀՀ զինվորական դատախազ Գրիգոր Էլիզբարյանը ներկայացրել է 2023 թ ընթացքում զինված ուժերում արձանագրված դեպքերը, դրանց բացահայտման ու կանխարգելման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Մասնավորապես՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ Զինված ուժերում և այլ զորքերի զորամասերում արձանագրվել են 2022 թ–ի համեմատ 48 %–ով ավելի քիչ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների (2023 թ. 52 դեպք, 2022 թ 98 դեպք):

Կազմակերպության 2024 թվականի մայիսի 30-ին ՀՀ Գլխավոր դատախազությունից տեղեկատվություն է հայցել այն մասին, թե՝ 2023 թ – 2024 մայիս ամսվա դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի «Հավելված 1»-ով սահմանված «Կոռուպցիոն հանցաքներ»-ի հատկանիշներով քանի զինվորական պաշտոնյայի նկատմամբ է հարուցվել քրեական հետապնդում: Ըստ ՀՀ Գլխավոր դատախազության տրամադրած տվյալների 2023-2024

թթ. մայիս ժամանակահատվածում ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների հսկողության ներքո գտնվող 30 քրեականվարույթների շրջանակներում հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ պաշտպանության նախարարության 56 պաշտոնատար անձանց նկատմամբ:

Վարույթներից 20-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 6-ով նախաքննությունը շարունակվում է. 14 անձ ներգրավված է որպես մեղադրյալ: Կազմակերպությունը գրությամբ խնդրել էր տրամադրել նաև քրեական վարույթներով ներգրավված անձանց կոչումների վերաբերյալ տեղեկություն, սակայն դատախազությունից հայտնել են, որ մեղադրյալների կոչումների վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում:

Հիշեցնենք, որ ՊՆ լրատվական վարչության նախկին ղեկավար Գևորգ Ալթունյանը հոկտեմբերի 12-ին կալանավորվել էր: Ալթունյանը մեղադրվում է ՊՆ գնումների փաստաթղթերում կեղծ տեղեկություններ զետեղելու եղանակով պետությունից 106 մլն 300 հազար դրամ հափշտակելու մեջ:

Քննչական կոմիտեի տարածած հայտարարության համաձայն[67]՝ նախաքննությամբ պարզվել է, որ Գ.Ա.-ն, զբաղեցնելով ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնը, հանդիսանալով պետական մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ և սահմանված կարգով նշանակված լինելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 2019, 2020 և 2021 թվականներին կազմակերպված N ծածկագրերով թվով երեք գնման ընթացակարգերում պատասխանատու ստորաբաժանման ղեկավար, պաշտոնեական դիրքն օգտագործելով «Էլ …» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Բ.-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, «Նոր …» հասարակական կազմակերպության տնօրեն, «DASARAN.AM» ապրանքային նշանի սեփականատեր Ս.Ա.-ի և գնումների հայտերը նախագծած անձանց՝ ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության ՎՏԱ բաժնի պետ Կ.Պ.-ի և նույն

[67] https://www.facebook.com/ArmInvestigative/posts/759806125949063/?_rdr

վարչության գլխավոր մասնագետ Ա.Ա.-ի օժանդակությամբ, պաշտոնական փաստաթղթերում մտցրել են ակնհայտ կեղծ տեղեկություններ և խաբեության եղանակով, շահադիտական նպատակով, 2019-2021 թվականների ընթացքում պետությունից հափշտակել առանձնապես խոշոր չափերով՝ 106.300.000 ՀՀ դրամ:

Սակայն, մոտ 9 ամիս տևող նախաքննության ընթացքում այդպես էլ ձեռք չեն բերվել ապացույցներ առ այն, որ Գևորգ Ալթունյանը որևէ առնչություն ունի ՊՆ-ից գումարներ հափշտակելու հետ: Ի վերջո հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարանը, դատավոր Վահե Դոլմազյանի նախագահությամբ, փետրվարի 14-ին մերժել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը՝ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության նախկին պետ Գ. Ալթունյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց տնային կալանքը ևս երկու ամսով երկարաձգելու միջնորդությունը: Ըստ այդմ՝ Ալթունյանի նկատմամդ կիրառվել է գրավը և այժմ նա ազատության մեջ է[68]:

Շարունակվում են պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու կամ ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու համար կեղծ փաստաթղթերի պատրաստման կոռուպցիոն դեպքերը: 2023 թվականի հուլիսի 7-ին ՀՀ քննչական կոմիտեն տարածեց հայտարարություն, համաձայն որի պաշտոնատար անձ հանդիսացող, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման զորակոչային բաժանմունքի պետ Վ.Մ.-ն նախնական համաձայնության է եկել մասնավոր բժշկական կենտրոնի հիմնադիր տնօրեն Ա.Մ.-ի հետ, վերջինիս միջոցով՝ իր ներկայացրած զորակոչիկների փոխարեն գլխուղեղի «Արախնոիդալ կիստա» հաստատված ախտորոշում ունեցող անձի ներկայացնելու հետազոտության, ապա զորակոչիկների անուններով ստացված համապատասխան հետազոտության կեղծ ախտորոշմամբ ակտերը տրամադրել իրեն: Այնուհետև Վ.Մ.-ն, օգտագործելով իր ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունը, հետազոտության ակտերը ներառել է համապատասխան

[68] https://www.1in.am/3388360.html

զորակոչիկների զորակոչային անձնական գործերում՝ այդ հիմքով զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու համար։

2023 թվականի հոկտեմբերի հայտարարությամբ էլ քննչական կոմիտեն նշում է , որ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ մի շարք անձինք իրենց որդիներին պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ապօրինի ազատելու կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա տարկետումներ ստանալու համար ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության նախկին աշխատակից Կ.Ք.-ի և «Ֆերդիկ» ՍՊ ընկերության տնօրեն Կ.Հ.-ի միջոցով 400 ԱՄՆ դոլարից մինչև 14.000 ԱՄՆ դոլար գումար կաշառք են տվել «Երևանի հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲ ընկերության բժիշկ-ֆտիզիատոր Ա. Ա.-ին, «Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ԲԿ-ի նախկին բժիշկ Ա.Ս.-ին, «Էրեբունի» ԲԿ-ի նախկին սրտաբան Պ.Ս.-ին, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի սրտաբանական բաժանմունքի նախկին վարիչ Լ. Ք.-ին։ Վերջինս զբաղեցնելով նաև սիրտանոթային հիվանդություններով բժշկական հաստատություն ուղեգրված զորակոչիկների բժշկական հետազոտություն և փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի նախագահի պաշտոնը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի զորակոչիկների բժշկական հետազոտություն և փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի կողմից 2 զորակոչիկների վերաբերյալ զինվորական ծառայությունից տարկետման իրավունք վերապահող առողջական վիճակի հետազոտման ակտեր տրամադրելու համար ստացել է ընդհանուրը 1600 ԱՄն դոլարի կաշառք, իսկ վերը նշված մյուս ԲԿ աշխատակիցները հավաստիացրել են կաշառք տվողներին, թե իբր կարող են համապատասխան բժշկական ոլորտի լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց միջոցով ապահովել զինվորական ծառայությունից ազատման իրավունք վերապահող ախտորոշումներով առողջական վիճակի հետազոտման ակտերի տրամադրումը, սակայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելուն ուղղված որևէ գործողություն չեն կատարել խաբեությամբ հափշտակելով խոշոր չափերով գումարներ:

Կատարված նախաքննությամբ խոշոր չափերով կաշառք տված և ստացած, ինչպես նաև նույն չափերով խարդախություն կատարած շուրջ 20 անձանց նկատմամբ, ոչ

արդարացնող հիմքերով, որոշումներ են կայացվել հանրային քրեական հետապնդումներ չհարուցելու և հարուցված հանրային քրեական հետապնդումները դադարեցնելու մասին:

Կոռուպցիոն ևս մեկ դեպքի վերաբերյալ պարզվել է, որ Ա. Վ.-ն, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ձմեռային զորակոչի ենթակա զորակոչիկի զինվորական ծառայության մեկնելը 6 ամսով անխոչընդոտ հետաձգելու համար 2024 թվականի հունվարին վերջինիս ազգականից պահանջել և ստացել են առանձնապես խոշոր չափերով՝ 25 հազար ԱՄՆ դոլար կաշառք»: Արդյունքում՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, զորակոչիկին տրամադրվել է տարկետում մեկ տարի ժամկետով:

Քրեական վարույթով պարզվել է նաև, որ «Ա. Վ.-ն և ՊՆ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Հ.-ն, ՊՆ մեկ այլ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ս. Հ.-ի և վերջինիս վարորդ Գ. Գ.-ի օժանդակությամբ, ևս մեկ զորակոչիկի զինվորական ծառայությունից անխոչընդոտ ազատելու համար վերջինիս հորից որպես կաշառք պահանջել և ստացել են 15 հազար ԱՄՆ դոլար»: Արդյունքում՝ նշված զորակոչիկը Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից:

Զինված ուժերում վերոնշյալ դեպքերը կաշառքի տրամադրման և ստացման միակ դեպքերը չեն, սակայն այլ դեպքերով հաղորդագրություններ չեն տարածվել:

Այսպիսով, ինչպես կառավարության հնգամյա ծրագրի մեկնարկի տարում, այժմ ևս՝ 3 տարի անց զինված ուժերում կոռուպցիոն բնույթի հանցագործությունները կրում են պարբերական բնույթ:

Ակնհայտ է, որ տարիներ շարունակ կոռուպցիոն դրսևորումների բացառման ուղղությամբ իրականացված քայլերը ցանկալի արդյունքի չեն հանգեցնում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփենք ՀՀ կառավարության 2021 - 2026 թթ. զինված ուժերի բարեփոխումներին և զարգացմանն ուղղված հնգամյա ծրագրով սահմանված գործողությունների կատարման վերաբերյալ հասանելի տեղեկությունները՝ համեմատելով դրանք 2021, 2022 և 2023 թվականների ընթացքում իրականացված գործողությունների հետ:

1. ***Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի***

1.1 Ինչպես անդրադարձել էինք ՀՀ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Կազմակերպության հրապարակած 2021[69], 2022[70] և 2023[71] թվականների տեղեկանքներում, այժմ ևս արձանագրում ենք, որ ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի մեկնարկից երեք տարի անց զինվորական ծառայության ժամկետների փոփոխության վերաբերյալ վերջնական որոշում չի կայացվել, և զինված ուժերում ներկայումս շարունակում է գործել մինչ այժմ կիրառվող «խառը կոմպլեկտավորման սկզբունքը»: Բացի այդ, ինչպես նախորդ տեղեկանքներում, այժմ ևս արձանագրում ենք, որ պրոֆեսիոնալ բանակի անցնելու գաղափարի հիմքում որպես շահագրգռող գործոն դրվում է զինծառայողների ֆինանսական ապահովությունը, հանձինս 2023 թ. մեկնարկած ատեստավորման մեխանիզմի և «Պաշտպան հայրենյաց» ծրագրի: ՀՀ Կառավարության 2021 - 2026 թթ. ծրագրի գործողության երրորդ տարում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետի փոփոխության ուղղությամբ հստակ աշխատանքների չիրականացումը, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, պայմանավորված է «Պաշտպան հայրենյաց» ծրագրի արդյունավետ ընդլայնմամբ: Մինչդեռ, «Պաշտպան հայրենյաց» ծրագրի իրականացումը, անկախ այն հանգամանքից, թե որքան արդյունավետ է այն գնահատվում պաշտպանական գերատեսչության կողմից, չպետք է բացասաբար անդրադառնա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետի փոփոխությանն ուղղված պետության վերցրած

69 https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/

70 https://hcav.am/military-reforms-21/

71 https://hcav.am/armyrep05-07-2023/

պարտավորության կատարման վրա։ Հակառակը, նշված ծրագրի արդյունավետ իրականացնումը երնթադրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է արդեն իսկ գործուն քայլեր իրականացրած լիներ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետի կրճատման ուղղությամբ։

2. ***Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում***

1.2 Ինչպես և նախորդ երեք տեղեկանքների հրապարակման ժամանակահատվածում,, այժմ ևս ազգային անվտանգության նոր ռազմավարության և ռազմական նոր դոկտրինի մշակման աշխատանքները դեռևս սկսված չեն, և հայտնի չէ՝ դրանց ուղղությամբ ինչ աշխատանքներ են իրականացվում: Ռազմական դոկտրինը, ըստ ՀՀ պաշտապանության նախարարության, մշակվելու է ազգային անվտանգության ռազմավարության մշակումից և հաստատումից հետո։ Մյուս փաստաթղթերի մշակման մասին տեղեկություններ հայտնի չեն։

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության անվտանգային մարտահրավերները մասնավորապես Ադրբեջանի շարունակվող ռազմատենչ հռետորաբանությունը, անհրաժեշտ է հնարավորինս շտապ քայլեր ձեռնարկել՝ անվտանգության նոր մարտահրավերներին հակազդման համար համարժեք անվտանգության նոր ռազմավարության և ռազմական նոր դոկտրինի մշակման ուղղությամբ, որն իր մեջ կներառի անվտանգային և ռազմական սպառնալիքների, հատկապես հիբրիդային և կիբեր հարձակումներին դիմակայելու համար գործուն մեծանիզմներ՝ մշակված միջազգային լավագույն փորձի հիման վրա։

1.3 Եթե նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին հայտնի չէր, թե արդյոք իրականացվել են քայլեր միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ, թե ոչ, ապա այժմ հայտնի է միայն, որ 2023 թվականի ընթացքում ամբողջացվել են զինված ուժերի կառավարման և ղեկավարման միասնական ավտոմատացված համակարգի ստեղծման աշխատանքները և դրանց արդյունավետության բարձրացման նպատակով պլանավորվել և անցկացվել են

ռազմավարական, հրամանատարաշտաբային զորավարժություններ և շտաբային մարզումներ: Չնայած ՀՀ պաշպանության նախարարությունը երեք տարվա ընթացքում առաջին անգամ է նշել, որ 2023 թվականի ընթացքում միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ քաղաքացիական կազմակերպությունների հետ կատարվել են և շարունակվում են իրականացվել նպատակաուղղված աշխատանքներ, մինչդեռ չի մասնավորեցրել, թե ինչպիսի աշխատանքների մասին է խոսքը և ինչ արդյունքներ են արձանագրվել այս պահի դրությամբ:

3. ***Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով***

3.1 Առաջադրված խնդիրների լուծման նպատակով մեծ շարժունակությամբ և կրակային հզորությամբ զորամիավորումների ու ստորաբաժանումների կազմավորման մասին տեղեկություններ հայտնի չէին ինչպես նախորդ տեղեկանքները հրապարակելիս, այնպես էլ այժմ:

3.2 2023 հուլիս – 2024 հուլիս ժամանակահատվածում ՀՀ ՊՆ-ում կատարվել է 13 հաստիքային-կադրային փոփոխություն, որոնց հիմնավորվածության կամ նպատակայնության մասին որևէ տեղեկություն չի հրապարակավել: Ինչպես նախկին տեղեկանքներում, ներկայումս ևս պնդում ենք, որ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի փոփոխությունը արդարացված են միայն այն դեպքում, եթե դրանք նպատակ են հետապնդում ապահովելու համար համակարգային և բովանդակային փոփոխություններ, երաշխավորելու համար զինվորական ծառայության անվտանգության և կարգապահության պահպանումը, ուղղված են զինված ուժերում մարդու իրավունքների գերակայության սկզբունքի կարևորմանը և զինված ուժերի մարտունակության բարձրացմանը:

4. ***Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում***

4.1 Նախորդ երեք տեղեկանքներում անդրադարձել էինք այն հանգամանքին, որ դաշնակից և գործընկեր համարվող պետությունների, , մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցության շրջանակներում իրականացվող քաղաքականությունը արդյունավետ չէ՝ հաշվի առնելով այն փաստը, որ Ռուսաստանի

Դաշնության զինված ուժերում կոռուպցիան ունի համակարգային բնույթ և պաշտպանված չեն զինծառայողների իրավունքները: ՌԴ-ն որպես Ուկրաինայի դեմ ագրեսիա սանձազերծած պետություն, շարունակում է նաև հիբրիդային պատերազմը ժողովրդավարական պետությունների և կառույցների դեմ, որի պատճառով գտնվում է շարունակվող և ավելի խստացող պատժամիջոցների ներքո/: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման խթանմանն ուղղված գործողությունների մասին տեղեկություններ հայտնի չէին ինչպես նախորդ երեք տեղեկանքների հրապարակման պահին, այնպես էլ այժմ: Բացի այն, որ ըստ ՀՀ ՊՆ–ի՝ նոր ու ժամանակակից սպառազինություն, ռազմական տեխնիկա և ռազմատեխնիկական այլ նյութական միջոցներ ձեռք են բերվում համաձայն «ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի 2023-2027 թթ. զարգացման պետական ծրագրի» հայտնի է նաև, որ Հայաստանը վարում է ռազմական տեխնիկայի ձեռքբերումը դիվերսիֆիկացման ռազմավարություն՝ էապես նվազեցնելով Ռուսաստանի Դաշնությունից ձեռք բերվող ռազմական տեխնիկայի քանակը և գործընկերներ ձեռք բերելով Արևմուտքում, Ասիայում, Հնդկաստանում: Ինչ վերաբերում է պաշտպանական ոլորտի գնումների գործընթացին, ապա այն դեռևս խոցելի է կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից, քանի որ գնումների գործընթացում չի պահպանվում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ի տարբերություն, օրինակ, ԱՄՆ-ի, որտեղ անվտանգության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովվում է ոլորտի գնումների վերաբերյալ պարբերաբար կատարված հրապարակումներով:

4.2 2021 թվականի համեմատ վերջին երկու տարիներին առավել ինտենսիվ են դարձել Հայաստան-ՆԱՏՕ, Հայաստան-ԵՄ հանդիպումների հաճախականությունը: Միաժամանակ հատկանշական է, որ ԱՄՆ-ի և ԵՄ երկրների զինված ուժերի զինծառայողների հետ համատեղ զորավարժությունները շարունակական են, որը միտված է միջազգային խաղաղությանն ու անվտանգության խթանմանը, ինչպես նաև ՀՀ զինված ուժերի մարտունակության բարձրացմանը: Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության հիմնական ուղղությունները ներառում են անվտանգության բարելավումը և ռազմավարական համագործակցությունը, կրթական և պաշտպանական բարեփոխումները, հումանիտար և քաղաքացիական օգնությունը, տարածաշրջանային

համագործակցությունը: Բացի այդ, 2023-2024 թվականներին Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցության կարևոր ոլորտներից մեկը եղել է ռազմական կրթության և պաշտպանական բարեփոխումների աջակցությունը: ՆԱՏՕ-ի աջակցությամբ շարունակվում են իրականացվել ծրագրեր, որոնք ուղղված են հայկական բանակի բարելավմանը և միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը: Հայաստան-ՌԴ/ՀԱՊԿ գործընկերային հանդիպումների նվազման և միևնույն ժամանակ Հայաստան-ԵՄ/ՆԱՏՕ հանդիպումների ինտենսիվության ավելացման շնորհիվ նաև առավել թափանցիկ դարձան սպառազինության թեման և դրա մասին տարածվող տեղեկությունները, ինչի մասին են վկայում նաև Կազմակերպության կողմից հրապարակված տեղեկանքներում արձանագրված սպառազինության վերաբերյալ տարածված տեղեկությունները:

5. ***Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում***

5.1 2021 և 2022 թվականների տեղեկանքների հրապարակման պահի դրությամբ հայտնի չէր, թե ինչ գործողություններ են իրականացվել և ինչ որոշումներ են ընդունվել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործմանն ուղղված: 2023 թ. հայտնի դարձավ, որ տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերի կյանքի կոչման նպատակով մշակվել է Տարածքային պաշտպանության և տեղական պաշտպանության մասին նոր հայեցակարգ:

5.2 Գնահատելով վարժական հավաքների իրականացման ընթացքում արձանագրված խնդիրների մի մասը լուծելու ուղղությամբ պետության ջանքերը, միաժամանակ ընդգծում ենք բոլոր խնդիրների վերացման ուղղությամբ արդյունավետ աշխատանք իրականացնելու կարևորությունը: Վարժական հավաքների կազմակերպման ընթացքում արդեն իսկ արձանագրված խնդիրները վկայում են, որ այս ուղղությամբ պետք է շարունակվեն իրականացվել զորահավաքի մեխանիզմների կատարելագործման համար անհրաժեշտ և արմատական քայլեր: Ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման, տարածքային պաշտպանության համակարգի ծրագրերի ներդրման ուղղությամբ իրականացվող

քայլերը պետք է բխեն բացառապես պահեստազորում հաշվառված անձանց իրավունքներից։

6. ***Ռազմական կրթության որակի էական բարձրացում***

6.1 ՀՀ զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացների վերանայման արդյունքում 2023 թվականի տեղեկանքի հրապարակման պահի դրությամբ մշակվել էին «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, զորահավաքային պատրաստության համար 25-օրյա պատրաստության ծրագիրը, ինչպես նաև ԶՈՒ զինծառայողների ատեստավորման հարցաշարերը և դրա շրջանակներում՝ գործնական վարժությունները, որոնք նախորդ տեղեկանքների հրապարակման պահին դեռևս ներդրված չէին, մինչդեռ ինչպես նախորդ տարի, այժմ ևս հայտնի չէ՝ որքանով են դրանք համապատասխանեցվել ՀՀ զինված ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին, քանի որ զինված ուժերին առաջադրված խնդիրների մեծ մասը հանրայնացման ենթակա չէ։

6.2 2023 թվականի տեղեկանքի հրապարակմամբ անդրադարձել էինք «Արհեստավարժ սերժանտական համակարգի» ներդրման աշատանքներին։ Մինչ այժմ, սակայն, տվյալներ չկան, թե ինչ փուլում է գտնվում այդ աշխատանքների իրականացումը և թե ինչ է բաղադրիչներ է ներառում «Արհեստավարժ սերժանտական համակարգը»։

6.3 2023 թվականին հայտնի դարձավ, որ սպայական ավագ դպրոցի ստեղծման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ՊՆ համագործակցում է Ներքին գործերի, Կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունների, ԱԱԾ-ի հետ։ Մինչդեռ, հայտնի չէ՝ ինչպիսի գործողություններ են իրականացվում նշված կառույցների հետ։

6.5 Ինչպես նախորդ երեք տեղեկանքներում, այժմ ևս չկան տեղեկություններ այն մասին, թե որքանով է ապագայամետ ՀՀ-ի ներկայիս ռազմական կրթությունը, քանի որ հայտնի չեն ռազմական կրթության հիմք հանդիսացող դրույթները, ՀՀ ՊՆ կողմից սահմանված չեն ապագայամետ ռազմական կրթության հստակ չափանիշները Հայաստանի Հանրապետության համար նոր աշխարհաքաղաքական պայմաններում։

6.6 Պատերազմավարման հիմնադրույթների, մարտական գործողությունների պլանավորման և վարելու ձևերի կրթական ծրագրերի վերանայման մասին այժմ ևս, ինչպես և նախորդ տեղեկանքների հրապարակման պահին, տեղեկություններ չկան:

6.7 2023–2024 թթ մեծ քայլ է կատարվել միջազգային ռազմաուսումնական հատատությունների հետ համագործակցության ուղղությամբ, այդ թվում նաև ՆԱՏՕ-ի օպերացիաների պլանավորման փորձագետների անցկացրած դասընթացները ՀՀ ԶՈՒ տարբեր ստորաբաժանումների զինծառայողների մասնակցությամբ:

6.8 Ինչպես արձանագրել ենք նախորդ երեք տեղեկանքներում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության դեպքերը հետևանք են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության ոչ պատշաճ պահպանման: Այժմ ևս հաշվի առնելով ՀՀ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում, հատկապես ոչ կանոնադրային հարաբերությունների, ինքնասպանության, սպանության, անվտանգության և մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով մահվան դեպքերի առկայությունը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ զինված ուժերում կրթության ոչ բավարար մակարդակը շարունակում է մնալ զինված ուժերի բարեփոխումներին խոչընդոտող կարևորագույն հանգամանքներից մեկը:

7. ***Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործում***

7.1 Ինչպես նախորդ երեք տեղեկանքներում ենք արձանագրել, այժմ ևս տեղեկատվական և կիբերանվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ հրապարակված տեղեկությունները շատ սուղ են, ուստի ինչպես նախորդ տեղեկանքների հրապարակման պահին, այժմ ևս դժվար է պատկերացում կազմել, թե ինչ տեմպերով է զարգանում ոլորտը: Ըստ էության, կիբերանվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումները և գործողությունները ինչպես նախկինում, այժմ ևս հնարավոր չէ գնահատել հիմնականում դրանց գաղտնիության պատճառով:

8. ***Ամրապնդել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը***

8.1 Զինված ուժերում շարունակաբար կատարվող հանցագործությունները փաստում են զինված ուժերում բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերի ոչ բավարար մակարդակի մասին: Չնայած ՀՀ ՊՆ կողմից տեղեկացվում է ՀՀ զինված ուժերում զինվորական հոգեբանների ինստիտուտի զարգացման և կատարելագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների՝ այդ թվում մասնագիտական կրթության ծրագրերով վերապատրաստումների մասին, հավելելով նաև որ փուլային կարգով զորամասերում ներդրվում են սպա-հոգեբանների հաստիքներ, սակայն նշված գործողությունների իրականացումը ինչպես նախորդ երեք տեղեկանքներում ենք նշել, այժմ ևս տեսանելի արդյունք չի արձանագրել, ինչի հավաստումն են զինված ուժերում հանցագործությունների, կանոնադրային հարաբերությունների խախտումների դեպքերը, նվազման միտում չունեցող մահվան՝ հատկապես ինքնասպանության, սպանության հետևանքով մահվան դեպքերը:

9. ***Մեծացնել զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործել զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները, բնակարանային ապահովման ծրագրերը, բարձրացնել զինծառայողների աշխատավարձերը***

9.1 2023 թվականի տեղեկանքի հրապարակման պահի դրությամբ պարզ դարձավ, որ զինծառայողների նյութական ապահովման երաշխիքների ձևավորման ուղղությամբ աշխատանքներ տարվում են: Սակայն ինչպես և նախկինում, այժմ ևս ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայության նկատմամբ գրավչության բարձրացման համար շարունակվում է որպես առաջնային գործոն դիտարկվել զինծառայողների ֆինանսական ապահովումը, մինչդեռ ֆինանսական ապահովության խնդրի հետ միասին անհրաժեշտ է լուծել առանց գաղափարական մոտեցման ձևավորման խնդիրները, առանց որի դժվար կլինի որևէ դրական արդյունք ապահովել:

9.2 Նախորդ՝ 2023 թ. հրապարակված տեղեկանքում արձանագրել էինք, որ չնայած բնակարանային ապահովման ծրագրերի կատարելագործման ուղղությամբ ներկայումս կատարվող փոփոխություններին, որոնք մեկնարկել են դեռևս Կազմակերպության

երկրորդ տեղեկանքը հրապարակելու պահին՝ 2022 հուլիսին, այնուամենայնիվ այժմ՝ 2024 թ. դեռևս ամբողջությամբ լուծված չէ 1990-ական թվականներից մինչ օրս բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում ներգրավված նախկին զինծառայողների բնակարանային ապահովման խնդիրը։

9.3 2021 և 2022 թվականների տեղեկանքների հրապարակման պահին զինծառայողների աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ էական քայլեր չէին իրականացվել։ 2023 թվականի տեղեկանքի հրապարակման պահին հայտնի դարձավ, որ պայմանագրային զինծառայողների աշխատավարձերի բարձրացման մեխանիզմն իրականացվում է ատեստավորման գործընթացի միջոցով։ Ինչպես նախորդ տարի, այժմ ևս ամբողջությամբ պարզ չէ, թե որքանով արդյունավետ և թափանցիկ են ատեստավորման արդյունքները, և որքանով է պաշտպանական գերատեսչությունը գնահատել ատեստավորման արդյունքում անբավարար գնահատական ստացող պայմանագրային զինծառայողներին զինված ուժերի համակարգից հեռացնելու հետևանքները զինված ուժերի համար։

10. ***Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործում, զինված ուժերի կարգապահության խթանում, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն, ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերի բացառում։***

10.1 Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործան ուղղությամբ իրականացված քայլերից է ԵԱՀԿ աջակցությամբ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին կից ՀՀ անվտանգության խորհրդի հետ համատեղ ստեղծված Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակը, որում, ի թիվս անվտանգային ոլորտին բարեփոխումներին ուղղված մի շարք գործողությունների, քննարկվել է նաև ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ձևավորմանն վերաբերյալ հարցեր։ Ռազմական Օմբուդսմենի ինստիտուտը հանդիսանում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմ և երաշխիք։ Ռազմական Օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման անհրաժեշտությունը շարունակում է մնալ արդիական, քանի որ զինված ուժերում իրավունքների պաշտպանության խնդիրները մինչ օրս կրում են

համակարգային բնույթ: Մինչդեռ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ձևավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավականին դանդաղ են և դեռևս բավարար չեն մոտ ապագայում նման կառույցի հեռանկարը իրատեսական համարելու համար: Միևնույն ժամանակ արձանագրում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ոչ մի հանրային լսումներ չեն կազմակերպվել զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ, չնայած առկա մտահոգիչ բազմաթիվ տեղեկությունների, որոնց մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակն անդրադառնում է իր պարբերաբար հրապարակվող տեղեկանքներում[72]

10.2 Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող բաղադրիչի կատարումը փորձ է արվում ապահովել Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակներում: Գործնականում, սակայն, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշիքներից նախ պետք է լինի զինծառայողների կողմից բոլոր խախտումների վերաբերյալ ահազանգելու խթանումը, որին պետք է հետևի բոլոր ահազանգերի պատշաճ քննությունն ու դրանց արդյունավետ լուծման արձանագրումը, որը կհանգեցնի հետագայում նման խախտումների նվազմանը:

Ինչպես նախկին տեղեկանքներում այժմ ևս արձանագրում ենք, որ ՀՀ զինված ուժերում շարունակվող ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության մտահոգիչ դեպքերը վկայում են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության պաշտպանության ոլորտում բացերի մասին, և հայտնի չէ զինվորական կարգապահության խախտման դեպքերի կանխման ուղղությամբ ինչ հստակ քայլեր են իրականացվում:

11. ***Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում***

11.1 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակահատվածում հստակ բացահայտվեց անհրաժեշտ քանակի և պայմաններով հագեցած ապաստարանների բացակայության խնդիրը, սակայն ապաստարանների խնդիրը մինչ օրս լուծված չէ ո՛չ ՀՀ

[72] https://hcav.am/death_cases_2024_1st_half/

https://hcav.am/hcav-2023-24-05-2024/

ողջ տարածքում և հատկապես սահմանամերձ բնակավայրերում, ինչը ինքնին շատ մտահոգիչ է պատերազմի վերսկսման վտանգի առաջ կանգնած երկրի համար։

11.2 2021 թ. հրապարակված տեղեկանքում արձանագրել ենք, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո հայ-ադրբեջանական նոր սահմանին համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է զինծառայողների ծառայության իրականացման բնականոն ընթացքը և սպառնում սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը։ 2022 թ. հրապարակված տեղեկանքում անդրադարձանք ՀՀ պաշտպանության նախարարի այն հայտարարությանը, որ պատերազմից հետո առաջացած նոր սահմանները կահավորելու, առաջնագիծ հասնող ճանապարհների կառուցման ուղղությամբ հսկայական աշխատանք է տարվում։ Մինչդեռ 2023 թվականից մինչ այժմ բավարար տեղեկությունների բացակայության պատճառով հնարավոր չէ գնահատել, թե որքանով է հաջողվել կահավորել առաջնագիծը, ստեղծվել են արդյոք անհրաժեշտ ենթակառուցվածքներ, մասնավորապես դեպի մարտական հերթապահության դիրքերը տանող անվտանգ և բարեկարգ ճանապարհներ, թե ոչ։

11.3 Ինչպես նախորդ տեղեկանքներումմ ենք արձանագրել՝ ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացումը չափազանց կարևոր է հատկապես պատերազմի վերսկսման վտանգի մեջ գտնվող պետության համար, ուստի հնարավորինս սեղմ ժամկետներում հարկավոր է ապահովել նման օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության բարձրացումը։

Կանանց ներգրավումը ՀՀ զինված ուժերում

Եթե Ծրագրի առաջին տարվա կատարողականի ուսումնասիրության արդյունքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2022 թ. արձանագրել էր, որ դեռևս հայտնի չէին այն նոր մոտեցումները, որով Կառավարությունը նախատեսում է ապահովել կանանց առավել մեծ ծավալով ներգրավումը զինված ստորաբաժանումներում, ապա ներկայումս գործում են մի շարք մեխանիզմներ՝ կանանց զինվորական ծառայության ներգրավելու ուղղությամբ, մինչդեռ գործընթացը դեռևս ուսումնասիրության կարիք ունի՝ կանանց զինվորական ծառայության ներգրավելու արդյունավետությունը գնահատելու համար։

Կոռուպցիոն ռիսկեր ՀՀ զինված ուժերում

Ինչպես Ծրագրի մեկնարկի տարում, այժմ ևս՝ 3 տարի անց, զինված ուժերում կոռուպցիոն բնույթի հանցագործությունները կրում են պարբերական բնույթ։ Պաշտպանության բնագավառի պետական գնումների վերաբերյալ բոլոր տեղեկությունները, այդ թվում վառելիքի, սննդի մատակարարման և այլն, շարունակում են մնալ խիստ գաղտնի։

Ակնհայտ է, որ տարիներ շարունակ կոռուպցիոն դրսևորումների բացառման ուղղությամբ իրականացված քայլերը ցանկալի արդյունքի չեն հանգեցնում։